

1931

F 65

3K26
F-83

2001

2010

Ա. ԳՈՐԿԻ

(202)

Վ. Ի.
ԼԵՆԻՆ

3K26
Գ-83

ՊԵՏԱԿԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1931

Բ 26

-83

Կ.

Ա. ԳՈՐԿԻ

Վ. Ի. ԼԵՆԻՆ

Թարգմ. կ. Փ.


ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՔԱՂՋՈՒԹՅՈՒՆ

Յերևան - 1931



20152

ԹԵՏՐԱԿԻ ՏՊԱՐԱՆ
ՀՐԱՄԱԿԱԿ. № 1638
ԳՐԱՌԵՊ. 6412 (Բ)
ՊԱՏՎԵՐ № 2558
ՏԻՐԱԳ 5.000



48862 ՀԿ



4429-53

Վ. Լաղիսիր Լենինը մեռավ:

Նույնիսկ նրա թշնամիների բանակից վո-
մանք ազնվորեն խոստովանվեցին, վոր հան-
ձինս Լենինի աշխարհը կորցրեց մի մարդու,
«վորն իր ժամանակակից լոլոր մեծ մարդկանց
չարքում տմենից ավելի ցայտուն կերպով եր
մարմնացնում իր մեջ հանճարեղությունը»:
Գերմանական «Prager Tageblatt» թերթը, ար-
պագրելով, Լենինի մասին մի հոգված, լի
հարգանքի զգացնումով և զարմանքով նրա
միթխարի գեմքի առաջ, վերջացրեց այդ
հոգվածը հետեւյալ բառերով՝

«Մեծ, անմատչելի և սարսափելի յե թր-
վում Լենինը նույնիսկ մահվան մեջ»:

Հոգվածի տոնից սկսրդ ե, վոր նրա չար-
ժոնիթը այն Փիղիոլոգիական բավականու-
թյունը չեր, վոր ցինիկաբար արտահայտվեց
«Թշնամու գիակից միշտ լավ հոտ ե բուրում»
աֆորիզմով, այն ուրախությունը չեր, վոր
մարզիկ զգում են, յեր անհանդիստ մեծ մար-
դր հեռանում ե նրանցից, —վո՞չ, այդ հոգվա-
ծի մեջ բարձր հնչում եր մալդկային պարձան-
քը մարզով:

Թուսական եմիկրացիայի մամուլն իր մեջ

վոչ ուժ գտավ և վոչ ել տակտ՝ Լենինի մահ-
վանը վերաբերվելու այն հարդանքով, վորը
շույց տվին բուրժուական լրագրելը, — տալով
ապրելու կամքի և բանականության անվեհե-
րության խոչորակույն արտահայտիչներից
մեկի անձնավորության գնահատականը:

Նրա պորտրետը գրել դժվար է: Լենինը,
արտաքուստ, ամբողջովին բառերի մեջ է,
ինչպես ծուկը թեփի մեջ: Նա պարզ երև և ան-
կեղծ, ինչպես այն բոլորը, ինչ վոր նա ասում
եր:

Նրա հերոսությունը համարյա բոլորովին
զուրկ ե արտաքին փոյլից, նրա հերոսությու-
նը, — այդ Ռուսաստանում վոչ-Հազվագյուտ
համեստ, առկետական անձնագործությունն և
ազնիվ ոռու ինտելիգենտ-հեղափոխականի,
վորն անխախտ համոզված ե սոցիալական ար-
դարության հնարավորությանը յերկրի վրա,
այդ հերոսությունն ե այն մարդու, վորը հրա-
ժարվել ե աշխարհի բոլոր բավականություն-
ներից՝ մարդկանց բախտավորության համար
ծանր աշխատանք կատարելու նպատակով:

Այն, ինչ յես գրել եմ նրա ասին շտա-
պով, նրա մահից հետո, գրված ե հուզված
վիճակում, արագ և վատ: Վորոշ բաներ յես
չեմի կարող գրել «ասկանի» նկատառումներով,
վոր, հուսով եմ, միանգամայն հասկանալի
յե: Խորաթափանց ե իմաստուն եր այդ մար-
դը, իսկ «վորոնեղ շատ իմաստություն», — այն-
տեղ շատ ախրություն»:

Մեծ կանխատեսություն ուներ նա և, 1921
թ. դատելով ու խոսելով մարդկանց մասին,
հաճախ և անսխալ նախագուշակում եր, թե
ինչ կլինեն նրանք մի քանի տարուց հետո:
Միշտ չեյիր ուզում հավատալ նրա կանխատե-
սություններին, և հաճախ նրանք վիրավորա-
կան եյին լինում, սակայն, դժբախտաբար
մեծ թվով մարդիկ արդարացրին նրա հոռետե-
սական բնութագրերը: Իմ հիշողությունները
նրա մասին՝ գրված են վոչ միայն վատ, այլև
վոչ-հաջորդականորեն և խոչոր բացերով: Յես
պետք ե սկսած լինելով լոնդոնի համագումա-
րից, այն որերից, յերբ Վլադիմիր իլյիչը
կանգնեց իմ առաջ՝ հրաշալի կերպով լուսա-
վորված վոմանց կասկածանքներով ու ան-
վատահությամբ, մյուսների բացահայտ թըշ-
նամությամբ և նույնիսկ ատելությամբ:

Յես այժմ ել, ահա, գեռ լավ տեսնում եմ
լոնդոնի շրջակայքում գտնված իր աղքատու-
թյամբ ծիծաղելի փայտաշեն յեկեղեցու մերկ
պատերը, աղքատիկ դպրոցի դասարանի նման-
վող նեղ գահլիճի փոքրիկ սրաքաձև պատու-
հանները: Այդ շենքը միայն արտաքուստ եր
յեկեղեցի հիշեցնում, իսկ նրա ներսը բոլորո-
վին բացակայում ելին պաշտամունքի առար-
կաները, և մինչև անգամ քարոզչի ցածրիկ ամ-
բիոնը տեղափորված եր վոչ թե առջեկում,
դահլիճի խորքում, այլ նրա մուտքի մոտ, յեր-
կու դռների միջև:

Մինչև այդ տարին յես Լենինին չեմի

Հանդիպել, և նրա զբովածքներից այնքան եւ
չեյի կարգացել, վորքան պետք եր կարդալ:
Սակայն, այս, ինչ վոր հաջողվել եր ինձ կար-
գալ, և Հատկապես նրան անձամբ ճանաչող
ընկերների վոգեվորված պատմությունները
մեծ տժով քաշում ելին ինձ դեպի նա: Յերբ
մեկ ծանոթացրին, նա, ամուս սեղմելով իմ
ձեռքը, իր ոուր աչքերով անողելով ինձ, սկզ-
բան խոսել հին ծանոթի տնով, կուտակով.—

— Այդ լու՛վ ե, վոր զուք յեկել եք: Կար-
ծե՞մ, զուք կոխի սիրում եք, այսահղ մեծ կոխէ
և լինելու:

Յես սպասում եյի, վոր Անինն այդպիս
չի լինելու: Իմ աչքին մի ինչ-վոր բան պակա-
սում եց նրա մեջ: Թոթովում ե, ձեռքերը կո-
խեց կանասակը, կանգնել և կոնկը կանասձ: Յեվ
բնդ հանրապես—իր ամրագչությամբ մի
տեսակ շատ պարզ ե, նրա մեջ վոչինչ չես
զգում «պարագլիխ» վայել: Յես զրականագետ
եմ: Պրոֆեսիան ինձ պարտավորեցնում և նրա
կառել մանր-մունր բաները, այն պարտակա-
նությունը զարձել և սովորությունը յերեմն
արգեն անտանելի, ձանձրալի:

Յերբ ինձ «տարան» Գ. Վ. Պլեխանովի
մաս, նա կանգնած եր ձեռքը կրծքին խաշած և
նայում եր խիստ, ձանձրությով, ինչպես նու-
յում ե իր պարտականություններից հօգնած
առուցքը մի նոր աշակերտի վրա: Նա տասց
ինձ մի չափապանց սովորական նախագահու-
թյուն: — «Յես ձեր տաղմանդի յերկըն

Եմ»: Բացի զբանից նու վոչինչ չտառց, վոր իմ
չիշողության մեջ մնացած լիներ: Ամբողջ հա-
մագումարի ընթացքում վոչ նու և վոչ ել յես
ցանկություն չզլացինք «մտերմոքեն» խոսե-
լու:

Իսկ այս ճաղատ, թոթովախոս, ամրա-
կազմ մարզը, մի ձեռքով շիկուվ սոկրատյան
ձակատը, մյուսով թափ տայսով իմ ձեռքը, սի-
րովությամբ փայլեցնելով իր զարմանալիու-
րեն աշխուժ աչքերը, իսկոյն խոսել սկսեց
«Մատ» գրքի թերությունների մասին, պարզ-
վեց, վոր նա այդ զիբքը կարդացել և ձե-
ռագիր վիճակում, վոր վերցրել եր ի. Պ. Լո-
տիժնիկովից: Յես սասցի, վոր զիբքը շտապով
եմ զրել, ստկայն, զեռ չեյի բացատրել, թե
ինչու եյի շտապել, — լինինը դրսով գրական
նշան անելով, ինքը բացատրեց այդ — շատ
լավ ե, վոր յես շտապել եմ, զիբքը հարկավոր
է, շատ բանվորներ հեղափոխական շարժմանը
մասնակցել են անդիտակցարար, տարերայու-
րեն, և այժմ նրանք «Մատ» գրվածքը, կար-
գալով, մեծ սպուտ կստանան:

«Շատ ժամանակակից գիրք ե»: Այդ միակ,
ստկայն, ինձ համար չափազանց արժեքավոր
նրա կոմպլիմենտն եր: Այսուհետեւ նա զործի-
մոց կերպով անզեկացավ՝ թարգմանվում և
արգյուք: «Մատ»—ը ոստար լիզուներով, վոր-
քան և փչացքի զիբքը ոտասկան և ամերիկա-
կան զրաբնաւթյունը, իսկ յերբ իմացայ, վոր
հեղինակին վորոշել են զտաբի յենթարկել,

սկզբում խոժոռավեց, իսկ հետո գլուխը բարձ-
րացնելով, աչքերը փակելով, ծիծաղեց ինչ-
վոր արտասավոր ծիծաղով. նրա ծիծաղը գրա-
վեց բանվորների ուշադրությունը, մոտեցավ,
կարծեմ, ֆոմա Ուրալսկին և ելի ուրիշ յերեք
հոգի:

Իմ տըամադըությունը շատ բարձր եր, յես
գտնվում եյի յերեք հարյուր ընտրյալ կուսակ-
ցականների մեջ, իմացա, վոր նրանք համա-
գումար են ուղարկված հարյուր հիսուն հազար
կազմակերպված բանվորների կողմից, յաս իմ
առաջ տեսնում եյի կուսակցության բոլոր լի-
դերներին—հինհեղափոխականներ՝ Պէտանո-
վին, Ակսելրոդին, Դեյչին: Իմ այդ տոնական
տրամադրությունը միանգամայն բնական եր
և հասկանալի կլինի ընթերցողին, յեթե յես
ասեմ, վոր հայրենիքից դուրս անցկացրած
յերկու տարվա ընթացքում իմ սովորական
ինքնազգացողությունը չափազանց իջել, ըն-
կել եր:

Ընկնել սկսեց իմ ինքնազգացողությունը
բեռլինից, վորտեղ յես տեսա սոցիալ-դեմո-
կրատիսյի համարյա բոլոր խոշորագույն պա-
րագլուխներին, աշեցի Ավգուստ Բերելի
մոտ, նստած կողք-կողքի շատ հաստ Զինդերի
հետ, և ուրիշ, դարձյալ չափազանց խոշոր
մարդկանց մեջ:

Մենք ճաշում եյինք մի ընդարձակ, կոկիկ
բնակարանում, վորտեղ դեղձանիկների վան-
դակները չքեղորեն ծածկված եյին ասեղնա-

դործած անձեռոցիկներով, բազկաթոռների
թիկնակներին ել ամյրացված եյին ասեղնա-
դործած անձեռոցիկներ, վորպեսդի նստողնե-
րըն իրենց ծոծրակներով չկեղտութեն ծածկոց-
ները: Շուրջը ամեն ինչ շատ սոլիդ բնույթ եր
կրում, ամեն ինչ ամուր եր, բոլոր ուտում
եյին հանդիսավոր կերպով, հանդիսավոր ձե-
վով ել ասում եյին միմյանց:

Մայլցեյտ:

Այդ բառն ինձ ծանոթ չեր, սակայն յես
գիտեյի, վոր ֆրանսերեն «մայլ»-ը ուուսերեն
նշանակում ե՝ վատ, գերմաներեն «ցեյտ»-ը
նշանակում ե ժամանակ, դուրս եր գալիս՝ վատ
ժամանակ:

Զինդերը յերկու անդամ կառցիւն անվա-
նեց «կմ ոսմանտիկ»: Բերելն իր արծվի քթով՝
ինձ մի փոքր ինքնարավական եր թվում: Խը-
մում եյին հունոսյան գինի և դարեցուր, զի-
նին թթու յեր և տաք, գարեջուրը լավն եր.
ուուսական հեղափոխության և սոց.-դեմկոր.
կուսակցության մասին ել թթու և ներողամը-
տորեն եյին խոսում, իսկ իրենց, գերմանական
կուսակցության մասին—շա՛տ լավ: Առհասա-
րակ, ամեն ինչ շատ ինքնարավական եր, և
զգացգում եր, վոր մինչև անդամ աթոռներն
ել գոհ եյին, վոր ծանրաբեռնված են պարա-
գլուխների մարմնի այնքան հարդելի միափուկ
մասերով:

Գերմանական կուսակցության հետ յես մի
«վասիուկ» գործ ունեյի. նրա ականավոր ան-

դամ, հետագայում չափազանց հայտնի Պարսկացուսը «Զնանիե»-յից հավատարմագիր աներթատրոններից «Համայնք»*) պիեսի հոնարարը զանձելու համար: Նա այդ հավատարմագիրն ստացել էր 1902 թ. Սեվաստապոլի կայարանում, անշեղալ կերպով այսուղ զնարով: Նրա հավաքած գումարներն այսպես ելին բաշխվելու.—ամբողջ գումարի 20 տոկոսն ստանում էր նա, մնացածի մեկ քառորդն ինձ, յերեք քառորդը ու—զ. կուսակցությանը: Պարվուսն, իհարկե, այդ պարմանը զիտեր, և այդ նույնիսկ հիանալի յեր նրա համար: Չորս տարվա մեջ պիեսը ընծաղըից Գերմանիայի բոլոր թատրոններում, միայն Բեռլինում, կարծեմ, մոտ 100 հազ. մարկ հավաքվեց: Սակայն փողի տեղ նա «Զնանիե»-յին ուղարկեց Կ. Պ. Պյատնիցկու անունով մի նամակ, վորով բարեհոգարար հաղորդում էր, վոր նա բոլոր փողերը ծախսել ե մի որբորդի հետ իտալիայում կատարած ճանապարհորդության վրա: Վորով հետեւ այդ, հավանորնն շատ հաճելի ճանապարհորդությունը անձամբ ինձ վերաբերում էր միայն իր մեկ քառորդով, ուստի յես ինձ իրավունք համարեցի զերմանական կուսակցության Կ. Պ. ուշադրությունը դարձել նրա մրանցում յերեք քառորդի վրա: յես այդ արի Կ. Պ. Լաղիթներովի միջոցով: Կ. Պ. Պարվուսի ճանապարհորդությանը շատ անսուրբեր

վերաբերվեց: Հետագայում յես լսեցի, վոր Պարվուսին զրկել են ինչ-որ կուսակցական տարիածաններից, միշտ առաջանակ անելու, յեթե նրա ականջները քաշեցին: Եւ ավելի ուշ Փարփղում ինձ ցույց տվին մի շատ զեղացիկ աղջիկ թե տիկին, ասելով, վոր Պարվուսը զրա հետ եր ճանապարհորդել:

— Ի՞մ թանգաղին, — մտքովս անցավ, — թանգաղի՞ն: Բեռլինում յես անսա զբակոնագետների, գեղարվեստագետների, մեկենասների և ուրիշ այլ մտքեանց, նրանք իրարից տարբերվում ելին ինքնուրավականություն և ինքնասքանչացման աստիճաններով:

Ամերիկայում շատ հաճախ աեսնում ելի Մորիս Խիլդիսին, վորը ուզում էր Նյու-Յորքի քաղաքագլուխ կոմ նահանդապետ դաշնալ, ահօնի եմ ծերունի Ֆերսին, վորը միորինակ և հոգնած կերպով մոնցում էր բոլորի և ամեն ինչի վրա, նու հենց նոր էր դարս յեկել բանից, — ահօն շատ շատերին և շատ բան, սուկայն չհանդիպեցի և մոչ մի մտքու, վորը հասկանար ուսւական հեղափոխության ամբողջ խորությունը, և ամենուրեք յես զգում ելի, վոր մեր հեղափոխությունը վերաբերվում էն, ինչպես «յեղթոպական կյանքի մի մասնավոր զեղթի» և սովորական յերեվոյ յթի մի յերերում, վորակաղ «շարունակ կամ խոլեր կամ հեղափոխություն», ինչպես աբուազայություն էր «սոցիոլիզմին համակրող» մի «պենամ լիզի»:

*) «Հասակաւմ»:

«Հայութելիկների» դրամարկղի ոգտին փող հովաքելու նպատակով Ամերիկա գնալու միտքը տվից և. բ. Կրտսենը. ինձ հետ պետք է դար վորպիս քարտուղար և յելութեների կազմակերպիչ վ. վ. Վարոնակին, նա շատ լավ գիտեր անդիքեն լեզուն, սակայն կուսակցությունը նրան ինչ-վոր այլ հանձնարարություն ավեց, և ինձ հետ յեկավ ն. ե. Յուրենինը, վորել (բ) կից մարտական խմբակի անդամ եր. նա «անվելու» յիք, սկսեց լեզուն սովորել ձառնապարհին և տեղում: Եսերները, իմանալով, թե յես ինչ նպատակով եմ զնում, պատանեկանական աշխաժությամբ հետաքրքրվեցին մեր դնալու հարցով, ինձ մոտ—գեռ Ֆինլանդիայում—յեկավ Զայկովսկին ժիղովսկու հետ միասին և առաջարկեցին փող հավաքել վոչ թե բայց իշխանությունը, այլ «առհասարակ հեղափոխության համար». յես հրաժարվեցի «առհասարակ հեղափոխությունից»: Այն ժամանակ, որանք Ամերիկա ուղարկեցին «Բարուշկային», և ամերիկացիների առաջ հանդեռ յեկան յերկու ժարդ, վորոնք իրարից անկախ և միմյանց չհանդիպելով սկսեցին փող հավաքելով, ըստ յերիտութիւն յերկու առբեր հեղափոխությունների համար, իհարկի, ամերիկացիները վոչ ժամանակ ունեցին և վոչ ել ցանկություն հասկանալու, թե նրանցից վորն և ավելի ըստ և ամելի սոլիդ: «Բարուշկային», կարծութ նրանք առաջուց ել ճանաչում եցին, ամերիկան ընկերները նրա մտախն լավ ուելլամ արին,

իսկ իմ դեմ ցարական գեսապանությունը սկանդալ սարքեց: Ամերիկական ընկերները, վորոնք նույնակես ոռոսական հեղափոխությունը «մասնավոր և անհաջողության մատնված գործ» եյին համարում, մի փոքր «լիբերալարար» եյին վերաբերվում միտինդներում իմ ժողոված դրամերին. յես ընդամենը շատ քիչ բան ժողովեցի, 10 հազար դոլարից պակաս: Վճռնցրի լրագրերում «վաստակելը», սակայն Ամերիկայում ել Պարվուս գտնվեց: Ընդհանրապես մեր տղելորությունն անհաջող անցավ, սակայն, յես այնտեղ գրեցի «Մատ» գիրքը, վորով և բացատրվում ե այդ գրքի մի քանի «վրիպումները», թերությունները:

Այնուհետև յես անցա իտալիա, Կապրի, այնուեղ խորասուզգլեցի ոռոսական լրագրերի ու գրքերի ընթերցանության մեջ,—այդ ել շատ իջեցրեց իմ տրամադրությունը: Յեթե ձնութից հանած առամ ընկունուկ յինքը զգարու, ապա, հավանաբեն, իրեն այնպես մենակ կզգար, ինչպես յես: Ինձ շատ զարմացնում եր այն, ծալքածուական արագությունն ու ձարպիկությունը, վորով ծանոթ մարդիկ մեկ օպլոտֆորմից» մյուսն եյին ցատկում:

Ոռոսասահնից դալիս եյին պատահական հեղափոխականներ, խորտակված, վախնցած, չարացած, զաղաղած իրենց վրա և այն մարդկանց վրա, վորոնք նրանց «անհասկանալի ձեռնարկության» մեջ եյին քաշել:—Ամեն ինչ կորած և,—առում եյին նրանք, ամեն ինչ

չարդված, վոչնչացված, աքսորված, բանակիրն և նետված:

Շատ ծիծաղելի քան կար, սակայն ուրախալի վոչինչ: Ուռւասատանից յեկած մի հյուր, զրականագետ և այն ել տաղանդավոր, ապացուցում եր ինձ, վոր իբր թե յես «Հաճու» պիեսի կուկայի գերն եմ խաղացել, յեկել յերիտասարդությանը մխիթարական խոսքեր եմ ասել, նա ինձ հավատացել եւ դըլուխը կոտրել, իսկ յես փախել եմ: Մյուսը պնդում եր, վոր ինձ «կերել», կլանել ե «ուենդենցը», վոր յես «վերջացած մարդ եմ» և բալետի նշանակությունը ժխտում եմ միայն այն պատճառով, վոր «կայսերական ե» այն: Առհասարակ չափազանց շատ ծիծաղելի, անմիտ բաներ եյին կատարվում, և հաճախ թըլում եր, վոր Ռուսաստանից ինչ վոր փառձ փոշի յե զալիս:

Յեվ, ահա, հանկարծ ինչպես մի հեքյաթ, յես զտնվում եմ Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության համագումարում: Ի հարկե, առ'ն եր:

Սակայն յես տոնեցի միայն մինչեվ առաջին նիստը, մինչեվ որակարդի հարցի վերաբերյալ վեճերը: Այդ վեճերի կատաղի ընույթը միանդամից սատցրեց իմ հրճվանքը և վոչ այնքան նրանով, վոր յես զզացի, թե ինչպես խիստ պառակտված ե կուսակցությունը յերկու մասի—սեփորմիստներ և հեղափոխականներ, —այդ մասին յես գիտեյի 1903 թվից,

այլ սեփորմիստների թշնամական վերաբերմունքով գեղի վ. ի. Լենինը: Այդ վերաբերմունքը հոսում ու ցայտում եր նրանց ձաւերի միջից, ինչպես ջուրը բարձր ճնշման տակ՝ չըդեհաշեջ խողովակից:

Միշտ կարեվոր չե, թե ինչ են խոսում, բայց միշտ կարեվոր ե, թե ինչպես են խոսում: Գ. վ. Պլեխանովը, այուրտուկով, բոլոր կոճակները կոճկած, բողոքական պատյորի նման, բանալով համագումարը, խոսում եր ինչպես կրօնուառուցյ, վատահ վոր նրա մտքերն անհերքելի յեն, յուրաքանչյուր խոսքը — թանգ և այնպես, ինչպես ե բառերի միջեվ կատարվող պառզանները: Շատ վարպետորեն նա ողի մէջ տարածում եր համագումարի անդամների գլխի վրա՝ գեղեցիկ կերպով կոկած իր ֆրազները, և յերբ բայլշեվիկների աթուների վրա վորեե մեկը լեզուն պատում եր՝ ընկերոջ հետ չնշալով, հարգելի ձառախոսը, փոքրիկ պառզա անելով, նրա վրա յեր մեխում իր հայացքը, ինչպես մի մեխ:

Իր այուրտուկի կոճակներից մեկը Պլեխանովը մյուսներից ավելի յեր սիրում, նա ընթշշրեն և անրնդհատ շոյում եր այդ կոճակը, իսկ պառզանների ժամանակ մեղմում եր՝ ինչպես զանգի սեվեռամկ, — կարելի յեր կարծել, վոր հենց այդ սեղմումն ել ընդհատում եր նրա ձտոի սահուն ընթացքը: Նիստերից մեկի ժամանակ Պլեխանովը, պատրաստվելով ինչ վոր

մեկին պատասխանելու, ձեռքերը կրծքին խաչելով, բարձր և արհամարհական ձայնով արտասահնեց .—

— Հըր՛:

Այդ ծիծաղ առաջացրեց բանվոր-բայլշելիկների մեջ, Գ. Վ. Պլեխանովը բարձրացրեց հոնքերը, և նրա թուշը գունատվեց. յես առում եմ թուշը, վորովհետեւ յես ամրիոնի կողքից եյի նստած և հոետորների դեմքը կողքից եյի տեսնում :

Առաջին նիստում Գ. Վ. Պլեխանովի ճանի ժամանակ բայց չելիկների աթոռների վրա ամենից ավելի հաճախ չարժվում եր Լենինը, մերթ կծկելով, կարծես մրսում եր, մերթ ընդարձակվելով կարծես շոգում եր. մատները կոնտատակը կոխելով, սրբելով կզակը, թափահարելով իր մերկ գլուխը, նա ինչ-վոր շըն ջաց Մ. Պ. Տոմսկուն. Իսկ յերբ Պլեխանովը հայտարարեց, վոր «կուսակցության մեջ ոեփիզոնիստներ չկան», Լենինը կոացավ, նրա ճաղատ գլուխը կարմրեց, ուսերը ցնցվեցին անձայն ծիծաղեց, նրա կողքին և յետելը նըստած բանվորներն եյին ժայտում, իսկ դահլիճի վերջից մեկը խոժոռոված ու բարձր հարցրեց.—

— Իսկ մյուս կողմում ովքե՞ր են նստած: Կարճահասակ Ֆեոդր Դանը խոսում եր մի քարտու տոնով, վորին իսկական ճշմարտությունը հարզատ դուստր եր դայիս, նա ինքն ենել այդ ճշմարտությունը և դեռ շարունակում է դաստիարակել: Իսկ ինքը ֆեոդոր Դա-

նը կարլ Մարքսի կատարյալ մարմնացումն է, իսկ բայց լինելի կարու մերուներ, անկարգ տղերք, վոր հատկապես պարզ յերեվում է նըրանց վերաբերմունքից դեպի մենչեվիկները, վորոնց շարքերում են գանվում «մարքսիզմի բոլոր ականավոր տեսաբանները», ասաց նա:

— Դուք — մարքսիստներ չեք, — արհամարանքով առում եր նա, վոչ, դուք մարքսիստ չեք: Յեվ ողի մեջ դեպի աջ պարզեց իր դեղին բոռնցքը: Բանվորներից մեկը հարցրեց նրանից՝

— Իսկ յե՞րբ եք դուք նորից գնալու լիբերալների հետ թեյ խմելու: Չեմ հիշում, առաջին նիստում Մարտովը հանդես յեկավ, թե վոչ: Այդ զարմանալի չափով համակրելի մարդը խոսում եր պատանեկական կրակով, և թըռում եր, թե նա առանձնապես խորն ե զգում պակասուման դրաման, հակասությունների ցավը:

Նա ամբողջապես ցնցվում, որորվում եր, ջղաձղորեն բաց եր անում ուլայած շապիկի ուժիքը, թափահարում եր իր ձեռքերը. շապիկի մանժեաները դուրս թռչելով պիջակի թեկերից, ծածկում ելին նրա ձեռքի թաթը, նա ըստ ձրացնում եր ձեռքը, թափ տալիս, վորպեսզի մանժեաը կրկին իր որինական անօքը դարձնի: Ինձ թվում եր, վոր Մարտովը վոչ թե ապացուցում, այլ իսնդրում, ազերում ե. — անհրաժեշտ է պատակամանը վերջ տալ, կուսակցությունը չափազանց թույլ ե, վորպեսզի կա-

բողանա յերկու մասի բաժանվել, բանվորն ա-
մենից առաջ «ազատությանների» կարիք և
գումար, պետք է պաշտպանել միաբանությունը:
Յերեմին նրա առաջին ճառը հնչում եր հա-
մարյա պատմականորեն, խոսքերի առատու-
թյունը դարձնում է յին ճառն անհասկանալի,
իսկ ինքը հսկորը ծանր տպավորություն եր
թողնում: Ճառի վերջում, և կարծես նրանից
անկախ, այնուամենայինվ «մարտական» տո-
նով նա դարձյալ կրակուա գոռում եր մարտա-
կան ջոկատների և առհասարակ զինված ապրա-
տամբության նախապատրաստման աշխատան-
քի դեմ: Լավ չիշում եմ, ինչպես բայց կիր-
ունը աթոռների վրա մեկը զարմացած ըզա-
վեց՝

— ԱՇ քեզ բան:

իսկ կարծեմ, Մ. Պ. Տոմսկին հարցրեց.

— Կարելի յև մեր ձեռքերն եւ կտրել, վոր-
ովեսզի Մարտով հանգստանա:

Կրկնում եմ. Հավատացած չեմ, վոր Մար-
տովը խոսել է առաջին նիստում, յես նրա մա-
սին հիշեցի հենց միայն նրա համար, վորովե-
զի պատմեմ, թե ինչպես յին խոսում:

Նրա ճառից հետո բանվորները չենքում,
նիստի դաշտին առաջ խոժուված զրոյում

— Ահա ձեզ և Մարտովը. մինչդեռ «իսկ-
րիստ ե» յեղել:

— Գույները փոխում են ս. ս. ինտելի-

գիղեցիկ, կրքուա և խիստ տոնով խոսում
եր Ռողա Լյուքսեմբուրգը, հրաշալի կերպով
տիրապետելով հեղնանքի զինքին: Սակայն տ-
չու արագ ամբիոն բարձրացավ Վլադիմիր Իլի-
չը, թոթովալով արտասանելով «ընկերներ»:
Ինձ թվաց, վոր նա վատ և խսում, սակայն
արգեն մեկ բոպեցից հետո յես, ինչպես և բո-
լորը, «կլանվեցի» նրա ճառով: Յես առաջին
անգամ ելի լում, վոր քաղաքական ամենա-
բարդ հարցերի մասին կարելի յե այլքան
պարզ խոսել: Նո չեր աշխատում զեղեցիկ
Փրազներ հորինել, այլ ամեն մի խոսք դնում
եր ձեռքի ափը, զարմանալի կերպով մերկաց-
նելով, ցույց տալով նրա խօսկան խմատը:
Շատ դժվար է տալ այն արտակարդ տպավո-
րությունը, վոր նա առաջ բերեց:

Նրա ձեռքը պարզված եր դեպի առաջ, և
մի փոքր դեպի վեր իր բարձրացած ափը, վորը
կարծես կըսում եր ամեն մի խոսք, ցրելով հա-
կառակորդների Փրազները, փոխարինելով այդ
Փրազները ծանրակշիռ դրույթներով և ապա-
ցույցներով այն մասին, վոր բանվոր զասա-
կարզը իրավունք և պարտականություն ունի
իր ուղիով ընթանալու, և վոչ թե լիրերալ
ըութուազիայի հետեւց և նույնիսկ նրա կող-
քից, — այդ բոլորը արտասովոր մաքեր ելին,
և կենինը այդ առում եր, մի տեսակ, վոչ թե
իր կողմից, այլ, իսկապես, պատմության
կամքով: Նրա ճառի միաձույությունը, կա-
տարյալ ամրոցջացած խմատը, անկեղծու-

թյունն ու ուժը, նա ինքն ամրողջովին ամրիունի վրա— կարծես կլասիկ արվեստի արտադրությունն իններ. ամեն բան կա և ավելորդ վոչինչ չկա, վոչ մի զարգարանք, իսկ յեթե դրանք կային,— չեն նկատվել, նրանք ել բնականաբար նույնքան անհրաժեշտ են, ինչպես դեմքի յերկու աչքը, ձեռքի հինգ մատը:

Ժամանակի հաշվով նա իրանից առաջ հանգես յեկած հոկտորներից քիչ խոսեց, իսկ արավորությամբ— զգալի չափով ավելի. Միայն յե՞ս չեյի այդ զգում, իմ յետեվից վողեվորված շնչում ելին.—

— Բովանդակալից ե խոսում . . .

Հենց այդպես ել եր. նրա յուրաքանչյուր յեզրակացություն ինքն իրեն եր ծավալվում ու կառուցվում, իր մեջ պարունակված ուժի շնորհիվ:

Մենչեւկերն առանց քաշվելու ցույց են տալիս, վոր Լենինի ճառը նրանց համար անսխորժ ե, իսկ նա ինքը,— ավելի քան անախորժ: Վորքան ավելի համոզիչ կերպով եր նա ապացուցում, վոր կուսակցությունն անհրաժեշտարար պետք ե բարձրանա հեղափոխական թեորիայի բարձունքները՝ իր գործնականը բավականողմանիորեն ստուգելու համար, այնքան ավելի զարգած ելին ընդհատում նրա ճառը.

— Համագումարը Փիլիսոփայության աեղ չե՞:

— Մեզ մի սովորեցրեք, մենք գիտնառ զիստներ չե՞նք:

Հատկապես շատ եր յետանոլ ցուցաբերում մի ինչ վոր հաղթանգամ, մորքափոր, վորը խանութպանի գեմք ուներ. նա աեղից վեր եր ցատկում ե, կակազդելով, բղավում.—

— Դ-դավագի-իբներ, դ-դավագի-իբներ եք խաղում: Բ-բլանկիստներ: Հավանական նըշան եր անում գլխով մոզա Լյուքսեմբուրգը: Նա նիտերից մեկում շատ լավ տասց մենշևիկ-ներին.—

— Դուք վոչ թե կանգնած եք մարքսիզմի տեսակետի վրա, այլ նոտած, նույնիսկ պատկած եք նրա վրա:

Դաշլիճում ջղայնության, հեղնանքի, ուտելության չար, զաղջ քամի յեր փչում, հարյուրավոր աչքեր տարբեր ձեվով լուսավորում ելին Վ. Իլիչի գեմքը: Նկատելի չեր, թե թըշնամական հարձակումներ հոգում են նրան, նա խոսում եր տաքացած, սակայն ծանր, հանգիստ: Մի քանի որից հետո յես իմացա, թե ինչ եր նստել նրան արդ արտաքին հանգստությունը: Շատ սարսրինակ ու վիրափորական եր տեսնել, վոր նրա հանգեալ թշնամություն ե առաջացնում մի այնպիսի քնական միտք, թե մէայն թեորիայի բարձունքներից կուսկցությունը կարող ե տեսնել իր շարքերում սատացած տարածայնությունների պատճառները: Իմ մեջ այսպիսի տպավորություն եր սոեղծվում.— Համագումարի յուրաքանչյուր

որ գ. իւթէին ամելի ու ամելի նոր ամեր և
տալիս, նրան ավելի իրը պէտք, վասահ և զարձ-
նում, յարաքանչյուր որ նրա ձառեցն ավելի
հաստատ են հնչում, և համազամարի անդամ-
ների ամբողջ բայլէկիկյան մասը ավելի վրձ-
ուարար, ավելի զգաստ ու խիստ և արամա-
զրբում: Բացի նրա ձառերից ինձ համար յո
նույն ձեկով հոգեց մոզա Լյուքսիմբուրգի
հրաշալի և խիստ ձառը մենչեվիկների գեմ և
Մ. Պ. Տոմսկու կործանիչ, մըծահարական
ձառը, «բանվորուկան համազումարի» զազո-
վարի դիմ:

Ազատ բոպեներն ու ժամերը նու տնց եր
կացնում բանվորների մեջ, հարցնելով նրանց
ամենաչին, մանր կենցաղային հարցերի մո-
սին.

— Իսկ կանա՞յք ինչպես են, անտեսու-
թյունն ուտում, խորտակում և նրանց, հա՛.
այնուամենայնիվ—սովորո՞ւմ, կարգո՞ւմ են:

Դայդ-պարկում մի քանի բանվոր, վորոնք
առաջին անգամ ելին տեսնում ենինին, սկսե-
ցին խոսել, թե ինչպես ե պահում նա իրեն հա-
մագումարում: Նրանցից մեկը ընորոշ կերպով
տոսց.

— Զգիտեմ, զուցե այսուղ, Յեփրոպա-
յում բանվորներն ունեն և մի այլ, նույնպիսի
խելոք մարդ, — Բերելը, կամ մի ուրիշը: Առ-
կայն, չեմ հավատում, թե գոնվի մի ուրիշ
մարդ, վորին յես միանգամից սիրելի, այն-
պես, ինչպես ոյս մարդուն:

Մի ուրիշ բանվոր ճպառուղ ամելու-
ցը եց:

— Ետ մե՛րն ե:

Նրան առարկեցին:

— Պլեխանովն ել մերն ե:

Յես լսեցի մի սուր պատառիսն:

— Պլեխանովը մեր ուսուցիչն ե, մեր ա-
զան, իսկ Լենինը—մեր առաջնորդն ե, մեր
ընկերը:

Մի յերիտասարդ աղա հեգնորեն նկա-
մեց:

— Սյուրտուկն և Պլեխանովին նեղում:

Մի այսպիսի զեպք պատահեց: Ճաշարան
գնալիս ճանապարհին Վլադիմիր Ռլեխին
կանգնեցրեց մի մենչեվիկ բանվոր, հարցնելով
ինչ-վոր բանի մասին: Բլյիշը քայլերը դանդա-
ղեցրեց, իսկ նրա ընկերներն առաջ անցան: Մի
հինգ բողեյից հետո, ճաշարան գալով, նա,
գեմքը խոժուելով պատճեց:

— Տարորինակ ե, վոր այսպիսի միամիտ
աղան կուսակցական համագումար և ընկել-
հարցնում և ինձնից, թե ինչն ե վերջապիս
տարածայնությունների խոկական պատճառը:
Ահա, առում եմ, ձեր ընկերներն ուզում են
պարլամենտին մասնակցել, իսկ մեք համոզ-
ված ենք, վոր բանվոր գասակարգը պիտք ե
կովի, պայքարի պատրաստի: Կաբծես՝ հա-
կացավ...:

Ճաշում ելինք սակավաթիվ խմբով, միշտ
միենույն վոքրիկ, եժանազին ճաշարանում:

Յես նկատեցի, վոր Վ. իլյիչը շատ քիչ է ու-
տում—յերկու—յերեք ձվից ձվածեղ, մի փոքր
կտոր ապօռխտ և խմում է մի բաժակ թանձր
մուգ գարեջուր: Ամեն բանից յերեվում եր,
վոր նա շատ անփույթ է վերաբերվում իրեն,
իսկ ինձ ապշեցնում եր նրա զարմանալի հո-
գատարությունը դեպի բանվորները: Նրանց
սննդի գործը վարում եր Մ. Ֆ. Անդրեևան, և
նա հարցնում եր նրանից՝

— Ինչպես եք կարծում դուք, քաղցած
չե՞ն մնում բնկերները. վո՞չ.

— Հըմ, հըմ... Գուցե կավելացնեք բու-
տերրողները:

Յեկավ այն հյուրանոցը, գորուել յես ի-
շել ելի, և տեսնեմ մատհազված շոշափում և
անկողինը:

— Այդ ի՞նչ եք անում դուք:

— Նայում եմ, — խոնավ հո՛ չեն սավահ-
ները:

Յես իսկույն չհասկացա, թե նա ինչու յե-
ւովում իմանալ ինչպիսի սախաններ կան Լոն-
դոնում: Այն ժամանակ նա, նկատելով իմ տա-
րակուսանքը, բացատրեց: —

— Դուք պետք ե հետևիեց ձեր առողջու-
թյանը:

18 Թվի աշնանը յես հարցրի սորմուցի
բանվոր Դմիտրի Պավլովին, թե վո՞րն է, նրա
կարծիքով, լենինի ամենաբնարուշ դիմը:

— Պարզությունը: Պարզ է, ինչպես ձըշ-

մարտությունը: Նա այդ ասաց, վորպես մի
լավ մտածված և վաղուց վճռված րան:

Հայտնի յե, վոր ամենից ավելի խիստ
ժարդուն դատում են նրա ծառայողները: Սա-
կայն, լենինի շոփեր Գիլը, շատ փորձված մի
մարդ, ասում եր.—

— Լենինը մի առանձին մարդ է. նրա նը-
ման մարդ չիս: Յես նրան տանում եմ Մյաս-
նիցկայա փողոցով, վորտեղ մեծ շարժում կա,
հազիվ եմ գնում, վախենում եմ—մեքենան
չկոտրեմ, չչակն եմ սեղմում, շատ հուզվում
եմ: Նա բաց արեց դռնակը, մոտեցավ ինձ
վունակալի վրայով, ցած գլորվելու վտանդին
յենթարկելով իրեն, և համոզում ե ինձ՝

«Խնդրում եմ չհուզվես, Գիլ, գնա՝ ինչ-
պես բոլորը»: Յես հին շոփեր եմ, յես դիտեմ,
վոր այդպես վոչ վոք չի անի:

Դժվար ե տալ, նկարագրել այն բնականու-
թյունն ու ձկունությունը, վորով նրա բոլոր
տպավորությունները հոսում, ամբողջանում
եյին մի հունի մեջ:

Նրա միտքը, ինչպես կողմնացույցի ոլաք,
շարունակ իր սուր ծայրով գարձած եր դե-
պի աշխատավոր ժողովրդի դասակարգային
շահերի կողմը: Լոնդոնում մի յերեկո ազատ
եյինք, փոքրիկ խմբով գնացինք դեմոկրատա-
կան «Մյուզիկ խոլլ» թատունը: Վ. Իլյիչն ա-
խորժակով և վարակիչ ծիծաղով ծիծաղում
եր, նայելով կլուռների և եքսցենտրիկների
վրա, դեպի մնացած բոլոր բաներն անտարեր

եր և առողջնապես ուշադիր գիտում եր բրիտանական կոլումբիայի փայտոհատ բանվորների աշխատանքը։ Փոքրիկ թեմբ ներկայացնում եր անտառային ճամբար, նրա առողջ, զետնի վրա յերկու առողջակազմ յերիտասարդ մի բողեյում կարեցին ծառի բռնը, մոտ մի մետր հասառթյամբ։

— Ե՞ս, իհարկե, այդ հասարակության համար ե, իբոք նրանք չեն կարող այդպիսի արագությամբ աշխատել, — ասաց իլլիցը. — սակայն, պարզ ե, վոր նրանք այնուղ ել կուցիներով են աշխատում, ծառի փայտն անողեար տաշեղ զարձնելով. ահա ձեզ ե կոլուրական անդիտացիները։

Նու սկսել արտադրության անարխիայի մասին կապիտալիստական կարգերում, իզուր փչացող, կորչող հումքի հսկայական ուղղութ մասին, և վերջում. Հայրունեց, վոր մինչեւ այժմ վոչ-վոքի մտքով չեր անցել այդ թեմայով քի գիրք գրել։ Ինձ համար այդ մտքից վորոշ բան պարզ չեր, սակայն, յիս չկարողացա հարցնել Վ. իլլիչից, նա արդեն հետաքրքրությամբ խոսում եր «Էքսցենտրիզմ» մասին, վորպես թատրոնական արվեստի առանձին ձև։

Այստեղ ինչ-վոր յերդիծական կոմ Հունկեսական վերաբերմունք կա գեղի բնոց հունը բը քնքունքունքունք կա ինչ-վոր ձգուում շրջել, թարսել այդ բնոցունքունք, մի քիչ աղավաղել, ցոյ առ առ սովորականի հակառակը, հակա-

տրամարտնականը։ Միտումվոր ե, բայց չետաքը բրակա՞ն։

Մի-յերկու տարուց հետո, կապիրիյում, Ա.Ա.Բագրանով-Մալինովսկու հետ զրուցելով առաջիական վեօլի մասին, նու տասց նրան։ —

— Այ, լավ կիխներ զուք բանվորների համար մի վեպ գրեցիք այն թեմայով, թե ինչ-մար մի վեպ գրեցիք այն թեմայով, կողովունիքս կապիտալիզմի գիշատիչները կողովունիքս յերկիրը. ծախուելով, վասներով ամրոց նաւթը, ամրոց յերկտիրը, վասներով ամրոց վասներով պիրք կիխներ, անցուիր մասիչ առ։

Բաժանվելով Լոնդոնում, նա ասաց ինձ, վոր անգլատերական կուտ կապրի հանդսատանալու։

Սակայն, մինչեւ նրա զալու պատրաստությունը յիս նրան տեսա Փարիզում, յերկու սենյակից բաղկացած մի ուսանողական բնակարանում, — սակայն ուսանողական եր այդ բնակարանը միայն իր մեծությամբ, սակայն, վոր նրա մեջ թագավորող մաքրությամբ ու իրիս կարգով։ Նաղեծգա կոնսունտինովնուն, մեզ համար թեյ պատրաստելով, ինչ-վոր մազ գնաց, մենք մնացինք յերկուսով։ Այն ժամանակ քայլքայլում եր «Զնանիեն», և յիս յեկել է յի խոսելու վ. իլլիչի հետ՝ նոր հրատակություն կազմելու մասին, վորը, ըստ հրարակություն, համախմբեր մեր բոլոր զրուրականագեաներին։ Յես առաջարկում ելի հր-

բատարակչության խմբագրությունը հանձնել արտասահմանում վ. ի.-ին, վ. Վարովուկուն և ելի մի ուրիշի, իսկ Ռուսաստանում նրանց ներկայացուցիչը կլիներ վ. Ա. Դեսնիցիի—Ստրոյեվը:

Ինձ թվում եր, վոր պետք ե մի շարք գըրգեր գրել արեմտյան գրականությունների պատմության, ռուսական գրականության մասին, կուլտուրայի պատմության մասին, վորոնք հարուստ փաստական նյութ տային բանվորներին ինքնազարդացման և պրոպագանդայի համար:

Սակայն Վլադիմիր Իլյիչը քանդեց այդպլանը, մատնանշելով գրաֆնությունը, մեր մարդկանց կազմակերպելու լժվարությունը, ընկերների մեծ մասն զբաղված ե գործնական կուսակցական աշխատանքով, նրանք գրելու ժամանակ չունեն: Սակայն գլխավոր և ինձ համար ամենահամոզիչ պատճառաբանությունը մոտավորապես հետևյալն եր. — Հաստ գըրքի ժամանակը չե, հաստ գրքով սնվում ե ինտելիգենցիան, իսկ նա, ինչպես տեսնում եք, սոցիալիզմից նահանջում, անցնում է լիբերալիզմին, և մենք չենք կարող նրան շեղել, հանել իր ընտրած ճանապարհից: Մեղ պետք ե լրագիր, բրոշյուր, լալ կլիներ վերականգնել «Զնանիայի» գրադարանը, սակայն Ռուսաստանում այդ ճնարակոր չե գրաքննության պայմաններում, իսկ այստեղ—փոխադրական պայմանների պատճառով. մենք պետք ե մաս-

սայի մեջ նետենք տասնյակ, հարյուր հազարավոր թուուցիկներ, իսկ այդ քանակությունն անլեզարդ կերպով չի կարելի փոխադրել: Ապասենք և հետաձգենք հրատարակչության հարցը մինչեվ ավելի նպաստավոր ժամանակներ:

Ապշեցուցիչ, միշտ իրեն հատուկ աշխատաթությամբ իսոսում եր նա Դումայի, կադետների մասին, վորոնք «ամաչում են ակտյարբիստներ լինել», այն մասին, վոր «նրանց առաջ կա մի ճանապարհ դեպի աջ», իսկ հետո մի շարք ապացույցներ եր բերում պատերազմի «հավանորեն վոչ թե մեկ, այլ մի ամբողջ շարք պատերազմների մոտալուտության մասին» և,—նրա այդ նախատեսությունը չուտով արդարացավ Բալքաններում:

Վեր կացավ, բնորոշ շարժումով մատները ժիշետի տակով կոփեց կոնստանտինով և դանդաղ սկսեց քայլել նեղլիկ սենյակում, աչքերը կկոցելով ու փայլեցնելով:

— Պատերազմ կլինի: Անպայման: Կապիտալիստական աշխարհը հասել է փտած խըմորման վիճակին, արգելն այժմ ել հենց մարդիկ սկսում են թունավորվել չովինիզմի, նացիոնալիզմի թույնով: Յես կարծում եմ, վոր մենք գեռ տեսնելու յենք համայելքուպական պատերազմ: Հազիվ թե պրոլետարիատն իր մեջ ուժ գտնի կանխելու արյան այդ խրախանը: Ինչպես կարելի յե այդ անել բանվորների համայելքուպական գործադուլով: այդ

դործագուլը քաղաքացիական պատերազմի սկիզբ կը ինքը, մենք ունալ քաղաքազմներ ենք, չենք կարող գրա վրա հույս դնել:

Կանգ առնելով, նրբանով հատակին դարկելով, նա խոժողաված ասաց.—Պըոլեասրիան, իհարկե, սարսափելի կտուժի, այդպես և առայժմ նրա ճակատագիրը. սակայն նրա թշնամիները միմյանց ուժապառ կանեն. այդ նույնպես անխուսափելի յե:

Յեվ մոտենալով ինձ, նա ասաց, իարձեա՝ դարմանքով, մեծ ուժով, բայց ցածր.—

—Զե՞, մի զուք մտածեցեք. Հոնուն ի՞նչի յեն կոշակերը քաղցածներին քշում զեպի միմյանց զեմ սարքած սպանդը. կարո՞ղ եք, արդյոք, զուք մի ափելի իդիսական և զդիլի հանցանքի անուն տալ, քան այդ: Սարսափելի թանգ կնատի այդ բանվորներին, սակայն վերջիվերջո, իշահվեն նրանք: Այդ պատմության կամքի է:

Նա հաճախ եր խոսում պատմության մասին, սակայն, յես, յերբեք նրա ճաւահրում չեմ զդացել ֆեաթշական խոնարհում նրա, պատմության կամքի և ուժի առաջ.

— Այդ ի՞նչ սկանզալ և պատահել ձեզ կամ երիկայում. լրադրական աեզեկություններից յես զիտեմ բանի եյտթյունը, բայց ինչպես և պատահել այդ:

Յես համառոտ պատմեցի նրան իմ արկածները:

Յես յերբեք չեմ հանդիպել մի որիշ մար-

դու, վոր տինոպես վարակիչ ծիծազով ծիծագեր, ինչպես ծիծազում եր Վ. Իլյիշը: Նոյնիսկ տարրորինուկ եր տեսնել, վոր տրդքան խիստ ուեալիստ մարդը, վորն այնքան լավ տեսնում, խորունկ զգում և մեծ սոցիալական արագեղիաների անխուսափելիությունը, տրդանհաշտ, անդրդվելի մարդն իր տաելության մեջ գետի կապիտալիզմի աշխարհը, կարսող և յերեխայրար ծիծագել, արասավելու աստիճան խոր ծիծազել, խեղդվելով ծիծազից: Մեծ, ամուր հոգեկան առողջություն պետք եր ունենալ այդպիս ծիծազելու համար:

— Հա՞, ասենք՝ զուք հուժորի՛ստ եք, — տում եր նա ծիծազելով: Ա՛յ, չեյի կարող յենթագրել: Սատանան տանի՛ ինչքա՞ն ծիծազելի յե... .

Յեվ ծիծազի արտասունքները սրբելով, նա արդեն լուրջ, լավ, մեղմ ժպիտով ասաց.

— Այդ լավ է, վոր զուք կարող եք անհաջողություններին հումորիստարար վերաբերվել. հումորը հրաշալի, առողջ հասկություն է, յես չատ եմ հասկանում հումորը, բայց չունեմ հումոր: Իսկ կյանքում ծիծազելին թերես ավելի քիչ չե, քան տիտրը, իսկ կապես քիչ չե:

Պայմանագործեցինք, վոր յես նրա մոտ անցնեմ մեկ որից հետո, սակայն յեղանակը վատ եր, յերեկոյան յես առան արյուն ոկանցի թքել, իսկ մյուս որը յես հետոցտ Փարիզից:

Փարիզից հետո, մենք հանդիպեցինք կապ-
րիում։ Այստեղ իմ մեջ շատ տարրինակ տը-
պավորություն և մնացել. կարծես վ. իլլիչը
կապրիում յերկու անգում ե յնդել, յերկու
խիստ տարրեր տրամադրությամբ։

Մի իլլիչը, հենց վոր յես նրան հանդի-
պեցի նավահանգստում, իսկույն վճռաբար
հայտնեց ինձ—

— Յես դիտեմ, դուք, Ա. Մ., այնուա-
մենայիպ հույս ունեք, թե յես կհաշտվեմ
մասիստների հետ, թեև յես ձեզ նախազգու-
շացրի իմ նամակում, վոր այդ անհնար ե։ Ու-
րեմն, դուք արդեն վոչ մի փարձ չանեք։

Ճանապարհին՝ դեպի իմ բնակարանը և
այստեղ յես փորձեցի նրան բացատրել, վոր
նա այնքան ել իրավացի չե. յես մտադրու-
թյուն չեմ ունեցել և չունեմ ել հաշտեցնելու
փիլիսոփայական վեճերը, վորոնք իդեալ՝ այն-
քան ել հասկանալի չեն ինձ համար։ Բացի
դրանից, յես յերիտասարդական հասակից
համակված եմ անվաստահությամբ դեպի ամեն
մի փիլիսոփայություն, իսկ այդ անվաստա-
հության պատճառն այն տարածայնությունն
է, վոր գոյություն ունի փիլիսոփայության և
իմ անձնական «սուրյեկտիվ» փորձի միջև։
Ինձ համար աշխարհը դեռ նոր եր սկսիել, նոր
եր «կազմակերպվել», իսկ փիլիսոփայությու-
նը նրա գլխին բամփելով, բոլորովին անտե-
ղի, անժամանակ հարցնում եր։

«Ո՞ւր ես զնում, ինչո՞ւ յես զնում. ին-

չո՞ւ յես մտածում»։ Իսկ մի քոնի փիլիսո-
փաներ պարզապես և խստորեն հրաման ելին
արձակում։

«Կանգնիր»։

Բացի դրանից, յես արդեն զիտո՞յի, վոր
փիլիսոփայությունը, ինչպես մի կին, կարող
է շատ տգեղ լինել, նույնիսկ այլանդակ, սու-
կայն այնքան հաջողությամբ և համոզիչ
հագնված, վոր նրան կարելի յե գեղեցկուհու-
տեղ գնել։ Այդ ծիծառացքից վ. իլլիչին։

— Ե՛ս, այդ արդեն յերգիծարանություն
ե, — ասաց նա. իսկ վոր կյանքը միայն գետ
սկսվում ե, ձեվակերպվում ե, — լո՞վ։ Դրա
վրա դուք լուրջ մտածեցեք, այդտեղից դուք
կգաք այնտեղ, ուր դուք վաղուց յեկած պետք
ե լինելիք։

Այնուհետև յես նրան ասացի, վոր Ա. Ա.
Բազգանովը, Ա. Վ. Լունաչարսկին, Վ. Ա.
Բազգարովն իմ աշքում խոչոր մարդիկ են, հիա-
նալի, բազմակողմանիորեն զարգացած, կու-
սակցության մեջ յես նրանց հավասար մարդ-
կանց չեմ հանդիպել։

— Յենթադրենք, վոր այդպես ե. Լո՞վ,
իսկ ի՞նչ ե հետեւվում դրանից։

— Վերջիվերջո յես նրանց համարում եմ
մի նպատակի մարդիկ, իսկ նպատակի միաս-
նությունը, ըմբռնված և խորապես գիտակ-
ցված միասնությունը պետք ե վոր սրբեր,
վոչչացներ փիլիսոփայական տարածայնու-
թյունները . . .



— Ուրեմն, այսուամենայնիվ, հաշտեցան հույսը, դեռ կենդանի յեւ այդ զուր եւ, — ասաց նա, դեն նետեք այդ հույսը, և վորքան կարելի յեւ հեռու, բարեկամաբար խորհուրդն տալիս ձեզ: Պլեխանովն ել, ձեր կարծիքով, միենույն նպատակի մարդ եւ, այսինչ յես ահա, — մեր մեջ մնա, — կարծում եմ, վոր նա բոլորովին այլ նպատակի մարդ եւ, թեև մատերիալիստ եւ, և վոչ մետաֆիզիկ: :

Դրանով մեր զրույցը վերջացավ: Յես կարծում եմ, վոր կարիք չկա հիշելու, վոր յես այդ զրույցը վերաբռտադրում եմ վոչ բառացի ճշությամբ, վոչ սառացի: Մաքի ճշության համար չեմ կասկածում:

Յեվ ահա յես տեսա իմ առաջ վլագիմիր իւլիչին ել ավելի ամուր, ավելի անդրդվելի, քան Լոնդոնի համազումաբում: Սակայն այնտեղ նա հուզվում եր, և բոպեներ ելին լրնում, յերբ պարզ զգացվում եր, վոր կուսակցություն պառակումը նրան հարկադրում եւ շատ ծանր բոպեներ ապրելու:

Այստեղ նա արամազրված եր հանդիսաւ, սառնարյուն և կատակով, խստորեն խուսափում եր փելիսովայական թեմայի շուրջը զըրուցելուց և ընդհանրապես իրեն ուշադիր ու պատրաստ եր պահում: Ա. Ա. Բագդանովը զարմանալի չափերով համակրելի, մեղմ և լենինի վրա սիրահարված այդ մարդը, ստիպված եր չատ սուր և ծանր խոսքեր լսելու.

— Շոգենհառւերն ասել եւ. «Ով պարզ ե

մտածում, — պարզ ել խոսում ե», յես կարծում եմ, վոր դրանից ավելի լավ նա ուրիշ վոչինչ չի ասել: Դուք, ընկ. Բագդանով, պարզ չեք խոսում, արտահայտում. դուք ինձ մի յերկույթեք նախադասությամբ բացատրեք, թե ինչ եւ տալիս բանվոր դասակարգին ձեր «յենթագրույթը», և ինչո՞ւ յեւ մախիզմը մարքսիզմից ավելի հեղափոխական:

Բագդանովը վորձեց բացատրել, սակայն նա խօսպես աղոտ կերպով եր խոսում եւ բազմաբառ:

— Թողե՞ք, — խորհուրդ եր տալիս վ. իւլիչը. — ինչ-վոր մեկը, կարծյոք ժորեսը, ասել եւ. «Ավելի լավ եւ ճշմարտությունն ասել՝ քան լինել մինիստր», իսկ յես կավելացնելի նաև մախիստ:

Այսուհետեւ նա մեծ յեռնդով շախմատ խաղաց Բագդանովի հետ և տարվելով, բարկացակ, նույնիսկ վհատվեց, մի տեսակ, յերեխայի նման: Զարմանալի՛ բան. նույնիսկ այդ յերեխայական վհատությունը, ինչպես և նրա զարմանալի ծիծաղը չելին խախտում նրա ընափորության ամբողջական միաձուլությունը: Կապրիյում յեղավ և մյուս լենինը, — հրաշալի ընկեր, ուրախ մարդ, կենդանի ու անհոգ հետաքրքրությամբ զեղի ամեն ինչ աշխարհում, իը ապշեցուցիչ մեղմ վերաբերունքով դեպի մտրդիկ:

Մի անգամ յերեկոյան, յերբ բոլորը գնացին զրոսնելու, նա ասաց ինձ և Մ. Ֆ. Ան-

գրեւային, —ուրախ տոնով չեր ասում, այլ
խորը ցավակցությամբ. —

— Խելոք, տաղանդավոր մարդիկ շատ
բան են արել կուսակցության համար, կարող
ելին տասնամյատիկ ավելի անել, բայց և այն-
պես՝ նրանք չե՞ն կարող մեզ հետ ընթանալ.
չե՞ն կարող: Յեվ տասնյակ, հարյուրավոր
այդպիսի մարդկանց կոտրում, այլանդակում
և այս հանցավոր հասարակարգը:

Մի ուրիշ անգամ նա ասաց. —

— Լունաչարսկին կվերադառնա կուսակ-
ցության մեջ, նա ավելի քիչ ինդիվիդուլիստ
է, քան այն յերկուսը: Հազվագյուտ հարուստ
ոժոված բնավորություն և: Յես զեպի նա
«թուլություն եմ տածում», սատանան տանիք,
ինչ անմիտ բառեր են՝ թուլություն տածել:
Յես նրան, զիտեր, սիրում եմ, հրաշտի՛ ըն-
դեր ե. Նրա մեջ ինչ-վոր Փրանսիական փայլ
կա. Նրա թեթևամտությունն ել Փրանսիական
և. Նրա թեթեվամտությունը եստեսիվմից ե:

Նա մանրամասն հարցնում եր կապրիի
ձկնորոների, նրանց աշխատավարձի, տեր-
տերների ազդեցության, դպրոցի մասին, նրա
հետաքրքրության լայնությունը չեր կարող
զարմանք չպատճառել ինձ: Յերբ նրան ասա-
ցին, թե ահա այդ յերիտասարդ տերտերը չքս-
վոր գյուղացու վորդի յե, նա իսկույն ևեթ
պահանջեց, վորպեսզի նրա համար տեղեկու-
թյուններ ժողովեն, թե արդյոք վորքա՞ն հա-
ճախ են գյուղացիներն իրենց վորդիներին սե-

մինարդումներ տալիս, և արդյոք զյուղացի-
ների վորդիները վերադառնում են իրենց
գյուղերում տերտերություն անելու համար:

— Դուք հասկանո՞ւմ եք. յեթե այդ պա-
տահական յերեվույթ չե, ապա նշանակում ե,
այդ վատիկանի քաղաքականությունն ե: Այ-
րամանկ քաղաքականություն:

Զեմ կարող յերեվակայել մի ուրիշ մար-
դու, վորն արդքան բարձր կանգնած լինելով
մարդկանցից, կարողանար իրեն զերծ պահել
փառասիրության գայթակղությունից և իր
կենդանի հետաքրքրությունը չկորցներ գեպի
«հաստրակ մարդիկ»:

Նրա մեջ կար ինչ-վոր մագնիսականու-
թյուն, վորը գեպի նրան եր քաշում աշխա-
տանքի մարդկանց սրտերն ու համակրանքը:
Նա իտալերեն եր խոսում, սակայն Կապրիի
ձկնորոնները, վորոնք տեսել ելին Շալյապինին
և մեծ թվով ուրիշ խոչըր ոռու մարդկանց,
մի ինչ-վոր բնագդով իսկույն լենինին իր ա-
ռանձին տեղը տգին մնացած մարդկանց շար-
քում: Հրապուրիշ եր նրա ծիծաղը «սրտա-
րուղի» ծիծաղն այն մարդու, վորը հրաշ-
տի կերպով կարողանարով տեսնել մարդկա-
յին հիմարության անձունիությունը և բա-
նականության լարախաղացային խորամանկու-
թյունը, կարողանում եր հրճվել «պարզաբան
մարդկանց» յերեխայական միամտությամբ:

Հին ձկնորս Զիովաննի Սպոտգարոն ասաց
նիշա մասին,

Այդպիս ծիծաղել կարող և միայն ալզ
նիվ մարտը:

Արորիվելավ նավտկում, — խոր և յերկնքի
պես թափանցիկ ալիքների մեջ, լենինը սովորեց ձուկ վորսալ «մատով»—թելով, առանց
ձողի: Զկնորսները բացատրում եյին նրան, վոր
պետք ե բռնել, հենց վոր մատը թելի թրթռոց
ե զգում:

— Կողի՞, դրին-դրին: Կապի՞չ:

Նա իսկույն բռնեց ձուկը, բերեց և ման-
կական Հըճվանքով բղավեց վորսորդի հո-
վըշտակությամբ.—

— Բհը՛, դրին-դրին:

Զկնորսները բարձրաձայն և նույնպես յե-
րեխայի պես ուրախ քրքիջ բարձրացըրին ու
ձկնորսին անվանեցին

«Մինյոր Դրին-Դրին»:

Նա դնաց, հեռացավ Կապրիից, բայց նը-
րանք գեռ հարցնում եյին.

— Ինչպես ե ապրում Դրին-Դրինը: Ցարը
չի՞ բռնի նրան, չե՞:

Զեմ հիշում, մինչեվ Վ. իլլիչը, թե նրա-
նից հետո Կապրիում յեղավ Գ. Վ. Պետրո-
նովը:

Կապրիի գաղութի մի քանի վտարանդի-
ներ—զրականաշետ Ն. Ոլիգերը, Լորենց-
Մեմները, վոր մահվան եր դատապարտված
Սոչիում ապստամբություն կազմակերպելու

Համար, Պավել Վիգորչիկը և Ելի, կարծյոք,
յերկու ուրիշ մարդ ուզում ելին խասել նրա
հետ: Նա հրաժարվեց: Այդ նրա իրավունքն
եր, նա հիվանդ մարդ եր, յեկել եր հանգստա-
նալու: Սակայն Ոլիգերն ու Լորենցն ասում
եյին, վոր նա այդ արեց նրանց համար չատ
վիրավորական ձեվով: Նյարդային Ոլիգերը
պնդում եր, վոր Գ. Վ. մոտավորապես այն-
պիսի մի բան ե ասել, թե «Հոգնել ե խոսելու
ցանկություն ունեցավ, բայց գործելու անըն-
դունակ մարդկանց առատությունից»: Նա, ինձ
մոտ յեղած ժամանակ, իսկապես չկամեցավ
տեղական գաղութից վորեւ մեկին տեսնել:

Վ. Իլլիչը բոլորին տեսավ: Պլեխանովը վոչ մի
բանի մասին չեր հարցնում, նա արդեն ամեն
ինչ գիտեր և ինքն եր պատմում: Բայ ուռասո-
կանի լայն տաղանդի տեր, յելլրոպականորեն
դաստիարակված, նա սիրում եր շուայլել զե-
ղեցիկ, սուր արագահայտություններ, և, կար-
ծյոք, հենց միայն սուր խոսքի համար, անո-
ղոքաբար ընդգծում եր ուսար և ուսւ ընկեր-
ների թերությունները: Ինձ թվաց, վոր նրա
սրախոսությունները միշտ ել հաջող չեյին, հի-
շողությանս մեջ մնացել են միայն անհաջող-
ները: «Անչափ չափավոր Մերինգ», «ինքնա-
կոչ երիկո Ֆերիի, նրա մեջ մի մսխալ յերկաթ
անգամ չկա»: այստեղ բառախաղը հիմնված ե
ֆերրո-յերկաթ բառի վրա: Յեվ բոլորն ել՝
այսպիսի բաներ: Իսկ ընդհանրապես նա մարդ-
կանց վերաբերվում եր ներողամտորեն, հաւ-

կանալի յե՛ վոչ այնպես, ինչպէս տառված,
սակայն մի քիչ դրա նման։ Տաղանդավորա-
կույն գրականագետ, կուսակցության հիմ-
նադիրը, նա իմ մեջ խորը հարգանք եր առա-
ջացնում, սակայն վոչ համակրանք։ Զափա-
ղանց շատ «արիստոկրատիզմ» կար նրա մեջ։
Դուցե յես սիալ եմ դատում։ Յես առանձին
սեր չեմ տածում դեպի սիալները, սակայն
յես ել, ինչպես և բոլոր մարդիկ, նույնպես
սիալվում եմ։ Իսկ վաստը մնում է փաստ։
Հաղվագյուտ դեպքերում եմ յես հանդիպել
այն աստիճան տարրեր մարդկանց, ինչպես Դ.
Վ. Պլեխանովը և Վ. Ի. Լենինը։ Յեզ այդ
հասկանալի յե. մեկն ավարտում եր հին աշ-
խարհը խորտակելու իր աշխատանքը, իսկ
մյուսն արդեն սկսել եր իր նոր աշխարհը կա-
ռուցել։

Կյանքն այնպես դիվային հարտարությամբ
ե կառուցված, վոր ատել չկարողանալով՝ չես
կարող անկեղծ սիրել։ Արդեն հենց այս միակ,
մարդուն արմատից աղճատող՝ հոգու յերկատ-
ման անհրաժեշտությունը, ատելության մի-
ջից սիրելու անխոսափելիությունը կյանքի
այժմյան պայմանները խորտակման ե դատա-
պարտում։

Ծուսաստանում, այդ յերկրում, վորտեղ
տառապանքը քարոզվում է վորպես «հոգու-
փրկության» մի ընդհանրական միջոց, յես
չեմ հանդիպել, չեմ հանաչում մի այլ մար-
դու, վորն այնքան խորը, այնպիսի ուժով ա-

տելություն, զզվանք ու արհամարահանք բգ-
զար գեպի մարդկանց դժբախտությունները,
վիշտն ու տառապանքը, ինչպես Լենինը։

Իմ աչքում այդ զգացմունքները, այդ ա-
տելությունը դեպի կյանքի դրամաներն ու
տրագեղիաները առանձնապես շատ եյին
բարձրացնում Վլադիմիր Լենինին, այդ յեր-
կրի մարդուն, վորտեղ իփառս և ի սրբագոր-
ծում տառապանքի գրված են ամենատաղան-
դավոր ավետարանները, և վորտեղ յերիտա-
սարդությունն սկսում է ապեկ, մանր, ա-
ռորյա դրամաների, ըստ եյության, միորի-
նակ նկարագրություններով լցված գրքերով։
Ծուսական գրականությունը Յեվրոպայի ա-
մենահռուետեսական գրականությունն է. մե-
զանում բոլոր գրքերը գրված են այն թեմա-
յի շուրջը, թե ինչպես ենք մենք տառապում,
յերիտասարդական և հասուն հասակում—բառ-
նականության պակասությունից, ինքնակա-
լության ձնչումից, կանանցից, մերձավորի
սիրուց, տիեզերքի անհաջող կառուցվածքից,
իսկ ծերության ժամանակ—կյանքի սխալների
գիտակցությունից, ատամների պակասու-
թյունից, ստամոքսի կազմությունից և մեռ-
նելու անհրաժեշտությունից։

Յուրաքանչյուր ոռու, «քաղաքականու-
թյան համար» մի ամիս բանտում նստելուց
կամ աքսորավայրում ապրելուց հետո, իր
սրբազն պարտքն ե համարում Ծուսաստանին
չիչողությունների մի գիրք նվիրել այն մա-

սին, թե ինչպես ե ինքը տառապել։ Յեվ մինչև
այսոր վոչ վոքի մտքով չի անցել մի գիրք
հորինել այդ մասին, թե ինչպես ե նա իր ամ-
բողջ կյանքում ուրախացել։ Յեվ քանի՛վոր
ուսու մարդը սովոր է իր համար կյանք հորինե-
լու, ծրագրելու, սակայն վատ ձեվով ե կա-
ռուցում, իրագործում այդ կյանքը, ապա
շատ հավանական է, վոր յերջանիկ կյանքի
մասին դրված դիրքը նրան սովորեցներ, թե
ինչպես պետք է հորինել, ծրագրել այդպիսի
կյանքը։

Ինձ համար բացառապես մեծ է հատկա-
պես այդ զգացմունքը ։ Ենինի մեջ, դեպի
մարդկանց թշվառությունը տածած անհաշտ,
անշեջ թշնամության զգացմունքը, նրա վառ
հավատն այն մասին, -վոր թշվառությունը
կենցաղի անհաղթահարելի հիմքը չե, այլ մի
զագիր բան, վոր մարդիկ պետք է և կարող են
ավել, իրենցից դեն նետել։

Յես նրա բնավորության այդ հիմնական
դիմք կանվանելի, մատերիալիստի մարտու-
կան լավատեսություն, և այդ դիմք նրա
մեջ ուռական դիմ չեր։ Հենց այդ դիմն ել
հատկապես քաշում եր իմ հոգին դեպի այդ
մարդը, —Մարդ՝ մեծատառով։

17—18 թվականներին իմ հարաբերու-
թյունները լենինի հետ այնպես չելին, ինչ-
պես յես կկամ լնայի տեսնել, սակայն այլ
կերպ նրանք չելին ել կարող լինել։

Նա քաղաքագետ եր։ Նա կատարելուա-
թյամբ եր տիրապետում հայացքի այն խնստ,
ցայտուն պարզորոշությամբ, խիստ հետեւո-
ղականությամբ, վորն անհրաժեշտ է մի այն-
քան հսկայական, ծանր նավի զեկալալին,
ինչպիսին կապարե դյուղացիական Ծուսաս-
տանն է։ Իսկ յես որգանական ստելությունն
էմ տածում դեպի քաղաքականությունը, յես
վատ հավատք ունեմ դեպի մասսաների բա-
նականությունը, դեպի գյուղացիական մաս-
սաների բանականությունը, —առանձնապես։
Գաղափարի միջոցով դեռ չկազմակերպված
բանականությունը դեռևս այն ուժը չե, վորը
կյանքի մեջ և մտնում ստեղծագործաբար
Մասսայի բանականության մեջ գաղափար
չկա մինչև այն ժամանակ, քանի դեռ նրա
մեջ չկա իր բոլոր միավորների շահերի միաս-
նականության գիտակցությունը։

Հազարամյակների ընթացքում նա ապրում
ու ձգտում է դեպի լավը, սակայն այդ ձգտու-
մը նրա մարմնից գիշատիչներ և ստեղծում,
վորոնք հենց նրան են ստրկացնում, նրա ար-
յունով են ապրում, և այդպես կլինի մինչև
այնքան ժամանակ, յերբ նա կդիտակցի, վոր
աշխարհում միայն մի ուժ կա, վորն ընդու-
նակ և ազատելու նրան գիշատիչների դերու-
թյունից, —Լենինի ճշմարտության ուժը։

Յերբ 1917 թվին Լենինը, Ծուսաստան
գալով, հրապարակեց իր «Թեզիսները», յես
մտածեցի, վոր այդ թեզիսներով նա քաղաքա-

կանապես գաստիարակված բանվորների քառակապես չնչին, վորակապես հերոսական բառնակը և ամբողջ անկեզծորեն-հեղափոխական ինտելիգենցիային զոհ կրերի ոռու գյուղացիությանը: Ծուսաստոնի այդ միակ ակտիվուժը, ինչպես մի բուռ աղ, կլցվի գյուղի անհամ ճահիճը, անհետ կլուծվի, կծծվի նրանք, վոչինչ չփոխելով ոռու ժողովրդի վուրու, կենցաղի և պատմության մեջ:

Գիտական, տեխնիկական և ընդհանրապես վորակյալ ինտելիգենցիան, իմ տեսակենից, իր եյությամբ հեղափոխական է, և բանվորական, սոցիալախոտական ինտելիգենցիայի հետ միասին—ինձ համար ամենաթանդարին ուժն եր, վոր կուտակել եր Ծուսաստոնը,—ուրիշ ուժ, վոր ընդունակ լիներ իշխանությունը վերցնելու և գյուղը կազմակերպելու,—յես 17 թվականի Ծուսաստոնը չի տեսնում: Սակայն, այդ ուժերը, վորոնք քանակով աննշան եյին և ջատկած հակասություններով, կարող եյին իրենց գերը կատարել միմիայն ամուր ներքին միարանության գեղքում: Նրանց առաջ հոկայական խնդիր եր կանգնած—տիրապետել, զսպել գյուղի անարխիզմը, կուրտուրականացնել գյուղացու կամքը, սովորեցնել նրան իւելացի աշխատանքի, վերակառուցել նրա տնտեսությունը և այդ բոլոր միջոցներով յերկիրը առաջ շարժել. այդ բոլորը իրագործելի յե միայն այն ժամանակ, յերբ գյուղի բնագորները յենթարկեն քաղաքի

կազմակերպված բանականությանը: Հեղափոխության ամենասահաջին անելիքը յես համարում եյի այնպիսի պայմանների ստեղծումը, վորոնք նպաստեյին յերկրի կուլտուրական ուժերի աճմանը: Այդ նպաստակով յես առաջարկեցի կապրիում կազմակերպել դպրոց բանվորների համար, և ուսակցիայի տարիներում, 1907—1913, ուժերս ներածին չափարձում եյի ամեն կերպ բարձրացնել բանվորների հոգու արիությունը:

Այդ նույն նպաստակի համար վետրվարյան հեղաշրջումից հետո, 17 թ. գարնանը կազմակերպվեց «Դրական գիտությունների կազմակերպելու և տարածման ազատ ասացիազրպացման» մի հիմնարկություն, վորն իրեն նպատակ եր զնում, մի կողմից, Ծուսաստանում կազմակերպել գիտական-հետազոտակ. ինըստիտուտներ, մյուս կողմից, լայն չափերով և անընդհատ ժողովրդականացնել գիտական ու տեխնիկական գիտելիքները բանվորների մեջ: Ասսոցիացիայի գլուխ կանոնեցին խոշոր գիտնականներ, Ծուսաստանի Գիտությունների Ակադեմիայի անդամներ Վ. Ա. Մտեկլովը, Լ. Ակադեմիայի անդամներ Վ. Ա. Չուգայեվը, ակադեմիկ Ֆիրամանը, Ս. Պ. Կոստիչեվը, Ա. Պ. Պետրովսկին և մի շարք ուրիշները: Յեռանդով գանձվամ եյին միջոցները, Ս. Պ. Կոստիչեվը արդեն սկսեց տեղ վորոնել՝ զոո-բոտանիկայի հարցերի վերաբերյալ հետազոտական ինստիտուտ կառուցելու համար:

Ել ավելի պարզելու համար այս միտքը՝
ասեմ, վոր ինձ իմ ամբողջ կյանքում ճնշել ե
այն փաստը, վոր ճնշող մեծամասնությամբ
անդրագետ գյուղն իշխում է քաղաքի վրա,
ճնշում եր իմ միտքը գյուղացու զոոլոգիական
անհատականությունը և սոցիալական եմո-
ցիաների համարյա լիակատար բացակայու-
թյունը նրա մեջ։ Քաղաքականապես գրադետ
բանվորների գիտատուրան, գիտական ու
տեխնիկական ինտելիգենցիայի սերտ դաշինքի
պայմաններում, իմ կարծիքով, միակ հնա-
րավոր յելքն եր դուրս զալու այն գժվար կա-
ցությունից, վորն առանձնապես բարդացել եր
պատերազմի հետեւանքով, պատերազմի, վոր
ել ավելի յեր մեծացըել գյուղի անարխիան։

Կոմունիստների հետ յես տարակարծիք
ելի ինտելիգենցիայի դերի հարցում ուսւա-
կան հեղափոխության մեջ, վորը նախապատ-
րաստված եր հենց այդ ինտելիգենցիայի ճեռ-
քով, վորոնց թվում նաև բոլոր «բայլշեվիկ-
ները», վորոնք հարյուրափոր բանվորներ ելին
դաստիարակել սոցիալական հերոսության և
բարձր ինտելեկտուալ վոգով։ Ռուսական ին-
տելիգենցիան—թե գիտական և թե բանվորա-
կան, յեղել ե, մնում ե և դեռ յերկար ժամա-
նակ կիխի այն միակ բեռնակիր ձին, վոր
յծված և Ռուսաստանի պատմության ծանր-
ութին։ Զնայած նրա կրած բոլոր ցնցումնե-
րին ու հուզումներին, ժողովրդական մասսա-

ների բանականությունը դեռևս մնում է դքսից
դեկավարություն պահանջող մի ուժ։

Այդպես եյի մտածում յես 13 տարի առաջ
և այդպես եյի սխալվում։ Իմ հիշողություն-
ների այս եջը պետք եր գուրս զցել։ Սակայն՝
«ինչ գրված ե գրչով, չես հանի բահով, բրի-
չով»։ Բացի գրանից։ «Սխալների միջոցով
մենք սովորում ենք»—հաճախ կրկնում եր
վ. ի.։ Թող վերջապես ընթերցողներն իմա-
նան իմ այդ սխալը։ Լավ կլիներ, այդ սխալը
դաս լիներ այն անձանց համար, ովքեր շտա-
պում են յեղբակացություններ հանել իրենց
գիտողություններից։

Հասկանալի յե, վոր մասնագետների մի
մասի կողմից կատարված ամենաստոր վնա-
սարարության մի շարք փաստերից հետո
յես պարապոր եյի վերագնահատել—և վե-
րագնահատեցի—իմ վերաբերմունքը վեպի
գիտության ու տեխնիկայի աշխատավորները։
Այդպիսի վերագնահատությունները ելի՛ մի
Ռուսական արժեն, հատկապես ծերության հասա-
կում։

Փողովրդի աղնիվ պարագլուխների պաշ-
տոնը մարդկային ուժերից վեր՝ գժվար ե։
Անձնաբին ե, հնարավոր չե այն պարագլուխը,
վորը այս կամ այն աստիճան տիրան, բըռ-
նակալ չլինի։ Հավանաբար կենինի որոք ավե-
լի մարդ ե կոտորված։ Քան թոմաս Մյունցերի

որոք: Սակայն, չե՞ վոր լենինի դիմավորած հեղափոխությանը ցույց տրվող դիմադրությունն ել կազմակերպված եր ավելի լայն և ուժեղ: Այս ել պետք է նկատի ունենալ, վոր «բաղաքակարթության» գարգացմամբ մարդկային կյանքի արժեքն ել հայտնապես նվազում է, վորի մասին անվիճելի կերպով վկայում է մարդկանց վոչնչացնելու տեխնիկայի և այդ ճաշակի զարգացումը ժամանակակից Յեվրոպայում:

Սակայն առաջեք ձեր խղճի ճայնով.— վորքան տեղին և և արդյոք չափազանց զզվելի չե այն «բարոյագետների» կեղծավորությունը, վորոնք ուստական հեղափոխության արյունաբրու բնույթի մասին են խոսում այն ժամանակ, յերբ նրանք խատառակ համայելք- րոպական սպանդի չորս տարվա ընթացքում վոչ միայն չելին խնայում, ափսոսում միլիոնավոր վոչնչացվող մարդկանց, այլև ամեն կերպ բորբոքում ելին «մինչեվ լիակատար հաղթանակ» այդ զազրելի պատերազմը: Այժմ «կուտուրական ազգերը» ջարդված են, չյուծված և վայրենանում են, իսկ հաղթանակել ե համամարդկային քաղքենիական հիմարությունը.— նրա պինդ ողակները մինչև այսոր ել խեղղում են մարդկանց:

Շատ են զրել և խոսել լենինի դաժանության մասին: Հասկանալի յե, վոր յես չեմ կարող թույլ տալ ինձ նրան ստից ու զրադարությունից պաշտպանելու ծիծաղելի անտակտու-

թյունը: Յես դիտեմ, վոր զրադարտությունն ու սուտը քաղքենիների քաղաքականության որինականացման մեթոդն ե, թշնամու դեմ կովելու սովորական յեղանակը: Այս աշխարհի մեծ մարդկանց մեջ հազիկ թե գտնվի մեկը, վորին փորձած չլինեն ցեխոտել: Այդ բոլորին հայտնի յե:

Բացի գրանից, բոլոր մարդկանց մեջ ձգտում կա վոչ միայն ականավոր մարդուն ի- ջեցնել մինչև իր հասկացողության մակարդա- կը, այլև փորձել գլորել նրան իր վոտքերի կակ, այն կպչուն, թունոտ ցեխի մեջ, վորը նրանք ստեղծելով, անվանել են «առորյա կյանք»:

Յես զզվանքով եմ հիշում հետեւյալ փաս- տը.— 19 թվին, Պետերբուրգում «Գյուղացիա- կան չքավորության համագումար» կար: Ռու- սաստանի հյուսիսային նահանգներից մի քա- նի հազար դյուզացիներ ելին յեկել, և նրան- ց հարյուրավորներին տեղափորել ելին Ռո- մանովների Զմեւային Պալատում: Յերբ հա- մագումարը վերջացավ, և այդ մարդեկի վե- րադարձան իրենց տեղերը, պարզվեց, վոր նրանք վոչ միայն պալատի բոլոր վաննաները, այլև հսկայական քանակությումը սաքսոնա- կան, սեվրական և արևմելյան վազեր կեղառ- տել ելին, գործածելով, վորովես գիշերային անոթ: Այդ արվում եր վոչ թե կարիքից ըս- տիպված, — պարագաները արտաքնօշները սարքին վիճակում են յեղել, ջրմուզը գործել ե. վո՞չ,

այդ խուլիզանությունը կատարվել է գեղեցիկ իրերը փչացնելու, ապականելու ցանկությամբ։ Յերկու հեղափոխության և պատերազմի ժամանակ յես հարյուրավոր անդամներ նկատել եմ գեղեցիկը կոտրատելու, աղճատելու, ծաղրելու և ապականելու մարդկային այդ խալարամիտ, վրիժառու ցանկությունը։

Զպետք ե կարծել, վոր «գյուղական չշաղորության» այդ արարքը յես ընդգծում եմ՝ դեպի գյուղացին տածած իմ հոռետես վերաբերմունքից դրդված, վոչ, — յես գիտեմ, վոր գեղեցիկը վոչնչացնելու հիվանդագին ցանկությում տառապում են նաև ինտելիգենցիայի մի քանի խմբեր, որինակ, այն վաճառանդիները, վորոնք, ըստ յերեկույթին, կարցակայում են, թե յեթե իրենք Ռուսաստանից բարան չկա։

Բացաւիկ գեղեցկության նմուշ համար վոր իրերը փչացնելու չարամիտ ձգտումը նույն աղբյուրն ունի, ինչ վոր ունի արտակարդ մարդուն, ինչպես ել լինի, արտավորելու նողկալի ձգտումը։ Ամեն մի արտասովոր բան խանդարում ե մարդկանց ապրել այնպես, ինչպես նրանք են ուղում։ Մարդիկ ծարավի յեն, — յեթե ծարավի յեն, — վոչ թե իրենց սոցիալական սովորույթները հիմնովին փոխելու, այլ միայն ընդարձակելու դրանք։ Մեծամասնության հիմնական հառաջանքն ու վողըն ե

«Մի՛ խանդարեք մեզ ապրել այնպես, ինչպես մենք սովո՞ր ենք ապրել»։ Վլադիմիր Իլյիչ Լենինն այն մարդն եր, վորն այնպես խանդարեց մարդկանց ապրելու իրենց սովորական կյանքով, ինչպես վոչ վոք նրանից առաջ չերկարողացել այդ անել։

Համաշխարհային բուրժուազիայի ատելությունը դեպի նա մերկորեն ու զգվելիորեն պարզ ե, նրա, այդ ատելության կապույտ, ժանտախտային բծերն ամենուրեք փայլում են։ Այդ ինքնըստինքյան զգվելի ատելությունն ասում ե մեզ, թե ինչպես մեծ եր ու սարսափելի համաշխարհային բուրժուազիայի աչքում Վլադիմիր Լենինը — բոլոր յերկրների աշխատաբարներին վորի ներշնչողն ու առաջպրոլետարներին համար ներշնչողն ու առաջնորդը։ Ահա նա ֆիզիկապես գոյություն չունի, սակայն նրա ձայնը հետզհետե ավելի բարձր ու հաջողությամբ են կատարելու կամք։ Հետզհետե ավելի վատահ, համոզված, տմուր և հաջողությամբ են կատարում մեծ զործը Լենինի աշակերտները, նրա ուժի ժառանգները։

Ինձ հիացմունք եր պատճառում նրա մեջ ցայտուն-արտահայտված ապրելու կամքը և ակտիվ ատելությունը դեպի կյանքի սովորու-

թյունը, յես հաճույքով դիմում ելի պատասնեկական այն ազարտը, այն բուռն վոզեվությունը, վորով նա լցնում, տուգորում եր այն ամենը, ինչ անում եր: Ինձ կարմացնում եր նրա գերմարդկային աշխատունակությունը: Նրա շարժումները թեթեվ եյին, ճարպիկ և ժլատ, սակայն ուժեղ ժեստը լիովին ներդաշնակում եր նրա ճառին, վորը նույնպես ժլատ եր բառերով, սակայն հարուստ՝ մտքով: Յեվ Յոնղոլական տիպի նրա յերեսին վառվում, խաչում եյին կյանքի կեղծիքի ու վրշտի դեմ անդուլ պայքարող այդ մարդու յերկու սուր աչքերը, վառվում եյին, կկոցվելով, թարթելով, հեղնորեն ժպտալով, ցամամբ փայլատակելով: Այդ աչքերի փայլը նրա խոսքն ել ավելի այրող ու պարզ եր գարձնում:

Յերեմին թվում եր, վոր նրա հոգու անդուսպ յեռանդը կայծերի պես գուրս ե ցայտում նրա աչքերից, և այդ յեռանդով հագեցած, տողորված բառերը փայլում են ողի մեջ: Նրա ճառը միշտ աներեւելի ճշմարտություն, ֆիզիկական զգացողություն եր առաջ բերում:

Անսովոր և տարրորինակ եր Լենին տեսնել Գորկայի պուրակում զբոսնելիս — այն տատիճան նրա հետ կապված, անբաժան եր այնպիսի մի մարդու պատկերացումը, վոր նստած յերկար սեղանի ծայրին և, ժպտալով, փայլեցնելով գեկակալի սրատես աչքերը, հմտուեն, փարպետ ձեռքով զեկավարում ե ընկեր-

ների վիճաբանությունները, կամ թե՛ ամբիունի վրա կանգնած, յետ զցած գլուխը, նստում է լուս նստած ամբոխի, ձմբարտության ծառակ մարդկանց ագահ աչքերի մեջ իր վորոշակի, պարզ ու հատու բառերը:

Նրանք միշտ ինձ հիշեցնում եյին յերկաթյա տաշեղների ստու փայլը:

Զարմանալի պարզությամբ այդ բառերի յետեվից ծագում եր ձմբարտության գեղարվեստորեն — կերտված գեմը:

Ազարտը հատուկ եր նրա խառնվածքին, բայց այդ խաղամոլի շահասեր աղարտը չեր, այն մերկացնում, դրսեվորում եր Լենինի մեջ այն բացառիկ հոգեկան արիությունը, վորը հատուկ ե միայն այն մարդուն, վորը բազմակողմանիորեն և խորը զգում ե իր կապը աշխարհի հետ և մինչեվ վերջը, լիովին պը աշխարհի հետ և մինչեվ վերջը, լիովին ընդունել եր իր զերն աշխարհի քառսի մեջ — քառսի թշնամու զերը: Նա կարողանում եր միատեսակ հետաքրքրությամբ շախմատ խաղատելու պատմությունը», զայ, նայել «կոռոյդումի պատմությունը», ժամերով վիճել ընկերների հետ, ձուկ բռնել, ման զալ կապրիի՝ հարավոյին արեվի շիկացած շավիղներով, հաճույքով դիտել վորենձի փոսկե ծաղկեները և ձկնորսների մնջուր յերեխաներին: Իսկ յերեկոյան լսելով պատություններ միտաստանի մասին, գյուղի մասին, նախանձով հառաջում եր: — իսկ յետ

քիչ եմ ձանաչում մոռաստանը. Այմբիրսկ,
Կազան, Պետերբուրգ, արսոր, և համարյա
այս ե բոլո՞րը:

Նա սիրում եր ծիծաղելի բաներ և ծիծա-
ղում եր ամրող մարմնով, խսկապես թուլա-
նում եր ծիծաղից, յերբեմն արտասվում եր
ծիծաղից: Իր կարճ, բնորոշ «Հըմ, Հըմ» բա-
ցականչությանը նա կարողանում էր ան-
համար յերանդներ տալ, կծու, խայթող հեղ-
նանքից մինչեվ զգուշավոր կասկածանք, և
հաճախ այդ «Հըմ, Հըմ»-երի մեջ հնչում
եր մի սուր յերգիծանք, վոր մատչելի յեր
շատ սրատես, կյանքի հրեշավոր անհեթեթւ-
թյուններին լավ ծանոթ մարդուն:

Թիկնեղ, ամրակաղմ, Սոկրատեսի գան-
դով և ամենատես աչքերով նա հաճախ տա-
րորինակ ու մի փոքր ծիծաղելի գիրք եր
ընդունում — զլուխը յետ զցելով և իջեցնելով
դեպի ուսը, ձեռքերի մատները ժիշետի տա-
կով խորում եր կանատակերը: Այդ գիրքի մեջ
կար ինչ-վոր սիրելի ու ծիծաղելի բան, ինչ-
վոր հաղթական — աքլորային, և նա այդպի-
սի ըովեներում ամրող զովին փայլում եր ու-
րախությունից, այս անիծյալ աշխարհի այդ
մեծ զավակը, այդ հրաշալի մարդը, վոր պետք
ե զոհարերեր իրեն թշնամության ու ատելու-
թյանը՝ սիրո գործն իրականացնելու համար:

Մինչեվ 18 թ., մինչեվ Լենինին սպանելու
ամենազդիր ու ամենասուր փորձերը, յես
նրան չելի հանդիպել Ռուսաստանում և նույ-

նիսկ հեռավից չելի տեսել նրան: Յես յեկա
նրա մոտ այն ժամանակ, յերբ նա գժվարու-
թյամբ եր բանեցնում ձեռքը և հաղիկ եր շար-
ժում վիրավորված վիզը: Իմ վրդովմունքին
ի պատասխան նա գժկամակությամբ ասաց,
ինչպես խոսում են ձանձրացրած բաների մա-
սին.

— Պայքար ե՛, ի՞նչ կարող ես անել. յու-
րաքանչյուրն անում ե այն ինչ վոր կարող ե:

Մենք շատ բարեկամաբար հանդիպեցինք,
հասկանալի յե, սիրելի իւյիշի խօրաթափանց,
ամենատես աչիկները իմ, «մոլորյալիս» վրա
բացահայտ ցավակացությամբ եյին նայում:

Մի քանի բոպեյից հետո Լենինը բորբոք-
ված ասաց՝

— Ով մեզ հետ չե, նա մեր գեմ ե: Պատ-
մությունից անկախ մարդիկ — յերեվակա-
յություն ե: Յեթե ընդունենք, վոր մերե-
վիցե այդպիսի մարդիկ յեղել ե՞, — ապա
այժմ նրանք չկան, չի կարող լինել: Նրանք
վոչ-վոքի պետք չեն: Բոլորը, մինչեվ վերջին
մարդը ընկած են իրականության շրջապառու-
տի մեջ, իրականություն, վորն այնպես ե
խճճվել, ինչպես յերբեք խճճված չի յեղել:
Դուք ասում եք, վոր յես շատ եմ պարզեցնում
կյանքը, և վոր այդ պարզեցնումն սպառնում
ե կուլտուրան կործանել, հա՞:

Հեղնական ու բնորոշ՝

— Հըմ, Հըմ...

Նրա սուր հայացքն ավելի սուր և դառ-

նում, և ցածրացրած ձայնով լենինը շարունակում է. —

Լա՛վ, իսկ ձեր կարծիքով հրացանը ձեռքերին հարյուրավոր զյուղացիները սպառնալիք չե՞ն կուլտուրայի համար, վո՞չ: Դուք կարծում եք, վոր Սահմանադիր ժողով կոչվածը հաղթահարելու յեր նրանց անարխիզմը: Դուք, վոր այնքան շատ աղմկում եք դյուզի անարխիզմի մասին, պետք ե ուրիշներից ավելի լավ հասկանալիք մեր աշխատանքը: Ծուական մասսային պետք ե ցույց տալ ինչ-վոր շատ հասարակ, պարզ, նրանց բանականությանը շատ մատչելի բան: Խորհուրդներ և կոմունիզմ — պա՞րզ

Բանվորների դաշինք ինտելիգենցիայի հետ, ա՞յս: Այդ վատ չե, վոչ: Ասացեք ինտելիգենցիային, թող զա մեզ մոտ... չեվո՞ր, ձեր կարծիքով, նա անկեղծ ծառայում ե արդարության շահերին: Ել ինչ արգելք կարող ե լինել: Համեցե՞ք մեզ մոտ, այդ հենց մենք չեք վիթխարի գժվարություն հանձն տոե՞ւ ժողովուրդը վոաքի կանդնեցնելու, աշխարհին ասելու ամբողջ ճշմարտությունը կյանքի մասին, մենք ենք ցույց տալիս ժողովրդին մարդկային կյանքի ուղիղ, անմիջական ճառապահնը, սարկությունից, աղքատությունից, նվաստացումից դուրս դալու ձանապարհը:

Նա ծիծաղեց և անհիշաշար ասաց՝

Դրա համար ել ինտելիգենցիայի գնդակն ինձ հարվածեց:

Իսկ յերբ զրույցի աստիճանը մոտեցավ նորմալության, նա զայրութով ու տիրությամբ ասաց. —

— Մի՞թե յես վիճում եմ այն բանի գեմ, վոր ինտելիգենցիան մեզ անհրաժեշտ է: Բայց չեվոր դուք, տեսնում եք, թե ինչպես թշնամարար ե արամադրված նա, ինչպես վատ ե, հասկանում նա մոմենտի պահանջը և չի տեսանում, վոր առանց մեզ նա անզոր է, չի հասնի մասսաներին: Այդ նրա հանցանքը կլինի, յեթե մենք չափազանց շատ խստություն բանեցընենք:

Այդ թեմայի շորջը զրույցներ ելին ծագում համարյա նրա հետ հանդիպելու յուրաքանչյուր գեպքում: Յեվ թեյև խոսքով նրա վերաբերմունքը գեպի ինտելիգենցիան անվատական եր, — փաստորեն նա միշտ ճիշտ եր զնահատություն հոգեվոր յեռանդի նշանակությունը հեղափոխության պրոցեսում ե կարծես, համաձայն եր, վոր, ըստ եյտթյան, փաստորեն հեղափոխությունը պոռթկումն է հենց այդ յեռանդի, վորը հնացած ու տնձուկ պայմաններում չի գտել իր համար որինաչափ զարգացման հնարավորություն:

Հիշում եմ, յես նրա մոտ ելի գիտության ակադեմիայի յերեք անդամի հետ միասին: Խոսում ելինք Պետերբուրգի բարձրագույն գիտական հիմնարկներից մեկի վերակառուց-

ման անհրաժեշտության մասին։ Գիտնական-ներին ճանապարհ դնելուց հետո լենինը գունակությամբ ասաց։

— Այդ յես հասկանում եմ. սրանք խելոք մարդիկ են. ամեն ինչ նրանց մոտ պարզ է, իսկստ ձեվակերպված, իսկույն տեսնում ես, վոր մարդիկ լավ գիտեն, թե ինչ են ուղում. տոանձնապես դուք յեկավ ինձ այդ...

Նա անվանեց ոռուսական գիտության խո-չոր գեմքերից մեկին, իսկ մի որից հետո ար-դեն տուում եր ինձ հեռախոսով։

— Հարցրեք Ս., կզա՞ր, արդյոք նա մեզ հետ աշխատելու։

Յեկ յերբ Ս. ընդունեց առաջարկությու-նը, այդ անկեղծ, ուրախություն պատճառեց լենինին, ձեռքերը շփելով՝ կատակով տսաց։

— Ահա այդպես, մեկը մյուսի յետե-վեց մենք բոլոր ոռու և յեվրոպական Արքի-մեդներին մեր կողմը կքաշեք, այն ժամա-նակ աշխարհը ուզենա, թե չուզենա՝ այնու-մմենայիկ՝ կշրջվի։

Կուսակցության 8-րդ համագումարում
Ն. Ի. Բուխարինը, իմիջի այլոց ասաց.

«Ազգը՝ այդ բուրժուազիան և պրոլետ-րիատի հետ միասին— վոչ մի հիմք չկա ընդու-նելու ինչ-վոր արհամարհված բուրժուազիայի ինքնորոշման իրավունքը։

— Վոչ, ներեցեք, — առարկեց Լենինը, — այդ հիմքը հենց այն է, ինչ-վոր կա. դուք հենվում եք պրոլետարիատի ու բուրժուազի-այի շերտավորման պրոցեսի վրա, սակայն, տեսնենք դեռ, թե ինչպես այդ կկատարվի։

Այնուհետեւ, Գերմանիայի որինակով ցույց տալով, թե ինչպես դանդաղ ու դժվար կարգանում այդ շերտավորման պրոցեսը, և հիշելով, վոր «կոմունիզմը բռնություն ու-ժերով չի տարածվում», — նա այսպես արտա-հայտվեց ինտելիգենցիայի նշանակության մա-սին արդյունաբերության մեջ, բանակում և կոռպերացիայում։ — ցիտասը բերում եմ հա-մագումարի վիճարանությունների հաշվե-տվությունից, վոր ապված է «Известия»-յում։

«Այդ հարցը առաջիկա համագումարում պետք է վճռվի լիակատար վորոշակիությամբ. մենք կարող ենք կոմունիզմ կառուցել միայն այն ժամանակ, յերբ բուրժուական գիտու-թյան ու տեխնիկայի միջոցներն ավելի մատ-չելի կդարձնեն այն՝ մասսաների համար։

«Իսկ դրա համար պետք է աղարատն աս-նել բուրժուազիայից, պետք է աշխատանքի առաջարինը, Ասպարեզ քաշել բոլոր մասնագետներին։ Ա-սպարեզ քաշել բոլոր մասնագետներին։ Ա-սպարեզ քաշել բոլոր մասնագետներին։ Ել կա-ռանց բուրժուական մասնագետների չի կա-րելի արտադրողական ուժերը բարձրացնել։ Երանց պետք է շրջապատել ընկերական գոր-ծակցության մթնոլորտով, բանվոր կոմիսար-ներով, կոմունիստներով, պետք են նրանց այն-պիսի պայմանների մեջ դնել, վոր նրանք չկա-

բողանան դուրս պըծնել, սակայն պետք է նրանց հնարավորություն, տալ ավելի լավ աշխատելու, քան կապիտալիստների որոք, վորովհեռ հետեւ բուրժուազիայի զաստիարակած այդ խավը այլ կերպ չի աշխատի: Բուրժուական մասնագետները սովորել են կուլտուրական աշխատանքի, նրանք այդ աշխատանքը առաջ են չարժում բուրժուազիային կարգի շրջանակներում, այսինքն բուրժուազիային հարստացը նում են հսկայական նյութական ձեռնարկություններով և չնչին չափով այդ աշխատանքը կատարում ենին պըոլետարիատի համար: Բայց նրանք այսուամենայնիվ շարժում եյին կուլտուրան, — այդ նրանց պըոֆեսիան ե: Վոր չափով նրանք աեսնում են, վոր բանվոր դասակարգը վոչ միայն գնահատում ե կուլտուրան այլև ողնում ե կուլտուրան մասսաների մեջ ատարածելուն, նրանք փոխում են իրենց վերաբերմունքը մեր հանդեպ Այն ժամանակ նրանք բարոյապես ստըրկացած կլինեն և վոչ թե միան քաղաքականապես հեռացված բուրժուազիայից: Պետք է նրանց քաշել, ներդրավել մեր ապարատի մեջ, իսկ դրա համար յերբեմն անհրաշեժու ե զահարերություն անել: Մասնագետների նկատմամբ մենք չպետք է կիրառենք մանր բծախնդրության սիստեմը, մենք պետք է նրանց տանք գոյության վորքան հնարավոր ե լավ պայմաններ, այդ ամենալավ քաղաքականությունը կլինի: Եթե յերեկ մենք խոսում ելինք

մանր-բուրժուական կուսակցությունների լեզարիզացիայի մասին, իսկ այսոր ձերբակալում ենք մենշեվիկներին ու ձախ եսերներին, ապա այդ տատանումների միջից դարձյալ, այդ նուամենայնիվ անցնում ե մեկ ամենահայտատ գիծ — Հակահեղափոխական վոչնչացնել կուտուր-բուրժուական ապարատու ու ոգտագործել:»:

Մեծ քաղաքագետի այդ գեղեցիկ բառերի մեջ անհամեմատ ավելի շատ կենդանի, ունել իմաստ կար, քան քաղքենիական, անզոր ե, փաստորեն, կեղծավոր «հումանիզմի» բոլոր վողբերի մեջ: Դժբախտաբար, շատերը նրանցից, պետք ե բմբոնեյին և գնահատելին բանդվոր դասակարգի հետ ազնիվ աշխատանքի լրձվելու այդ կոչը, — չհասկացան, չգնահատեցին կոչը: Նրանք գերազանցին դար սնակալ վնասաբարությունը, դավաճանությունը:

Ճորտատիրական իրավունքի վերացումից հետո շատ «գարբատի մարդիկ» (Ճօրօնական մարդ), իրենց խառնվածքով ստրուկներ, նույնական պես մնացին ծառայելու իրենց տերերին հենց այն նույն գոմերում, վորտեղ յերբեմն տերերը ծեծում եյին նրանց:

Յես հաճախ առիթի ևմ անեցել լենինի հետ խոսելու հեղափոխական գործելակերպի և կենցաղի պաժանության մասին:

— Ի՞նչ եք ուզում գուրք, զարմանքով ու զայրացած հարցնում եր նա: — Հնարավո՞ր ե

արկյոք մարդասիրությունը մի այսպիսի շրտեսնված-կատաղի պայքարում։ ինչպէ՞ս կարող և այսուեղ փափկասրառություն կամ մեծահոգություն լինել։ մեզ շրջապատում, ողակում և Յեվրոպան, մենք զրկված ենք յեվրոպական պլոյետարիատից սպասվող ողնությունից, մեր վրա ամեն կողմից արջի պես ընկնում և հակահեղափոխությունը, իսկ մենք՝ ինչ ուրեմն։ Զպետք ե, իրավունք չունենք պայքարելու, դիմադրելու։ ի՞չ, ներեցե՞ք, մենք, հիմարներ չենք. մենք գիտենք, վոր այն, ինչ մենք ենք ուզում, վոչ - վոք չի կարող առել, բացի մեզանից։ Միթի՞ զուք կարծում եք, վոր յեթե յես հակառակ համոզմունքի լինելի, կնտեյի այստեղ։

— Ինչպիսի՞ չափով եք չափում զուք պայքարի, կովի ընթացքում անհրաժեշտ և ավելորդ հարվածների քանակությունը, — մի անդամ չարցը նա ինձ բուռն զրուցից հետո։ Այդ հասարակ, պարզ հարցին յես պատպախանեցի միայն քնարական ձևով։ Կարծում եմ, վոր այլ պատպախան չկա։

Յես շատ հաճախ եյի հաղթահարում նրան զանազան խնդիրներով, և յերեմն զգում եյի, վոր իմ միջնորդությունները մարդկանց մասին լենինի մեջ խղճահարություն են առաջ բերում դեպի ինձ։ Նա հարցնում եր։

— Զեզ չի թվում, վոր զուք դատարկ լուսերով եք զբաղվում։ Բայց յես անում եյի այն, ինչ-վոր անհրաժեշտ եյի համարում և պլոյե-

տարիատի թշնամիների հաշիվն իմացաղ մարդու խեթ, զայրացկոտ հայացքը չեր վանում ինձ։ Նա վշտաբեկ, շարժում եր գլուխը և ասում։

— Վարկարեկում եք զուք ձեզ ընկերների, բանվորների աչքում։ Իսկ յես ցույց եցի տալիս, վոր ընկերները, բանվորները, «գյուրաբորբոք ու գրգռված վիճակում» գտնվելով, հաճախ չափազանց թեթև և «հասարակ» կերպով են վերաբերվում արժեքավոր մարդկանց ազատությանն ու կայնքին, և այդ, իմ կարծիքով, վոչ միայն վարկաբեկում ե հեղափոխության աղնիվ, զժվար գործը ավելորդ, յերբեմն նաև անիմաստ գաֆանությամբ, այլև որյեկտիվորեն վնասակար և այդ գործի համար, վորովհետեւ վանում յետ և մղում ու գործից մեծ թվով խոշոր ուժեր։

— Հը՞մ, հը՞մ, — հոռետեսորեն փնթվընթում եր կենինը և մատնանշում ինձ ինտելիգենցիայի կողմից բանվորական գործին դավաճանելու բազմաթիվ փատերը։

— Մեր մեջ, — ասում եր նա, — չեվո՞ր չատերը դավաճանում են վոչ միայն վախկոտությունից, այլ ինքնասիրությունից, վախենալով, վոր կարող են խայտառակել, յերկյուղ կրելով, վոր չլինի թե տուժի իրենց փայփայած թեորիան՝ գործնականի հետ բախվելիս։ Մենք գրանից չենք վախենում։ Թեորիան, հիպոթեզան մեզ համար ինչ-վոր «սըր-

բազման» բան չե, մեկ համար այդ աշխատանքի գործիք ե:

Յեվ, այնուամենայնիվ, յես չեմ չիշում մի գեաք, վոր իլյիչը մերժած լինի իմ խնդիրը: Իսկ յեթե պատահում եր, վոր նրանք չեցին կատարվում, ապա այդ տեղի յեր ունենում վոչ թե նրա մեղքով, այլ հավանորեն, «մեխանիզմի այն թերությունների» պատճառով, վորով միշտ հարուստ ե յեղել ուստական պետականության անձունի մեքենան: Կարելի յենթաղըել, վոր յերբեմն գեր եր խաղում նաև ինչ-վոր մարդկանց չար չկամությունն արժեքափոր մարդկանց վիճակը թեթեվացնելու, նրանց կյանքը փրկելու, հարցում: Հնարավոր եր այսակ նաև «վնասաբարությունը», թըշնամին նույնքան սրիկա յե, վորքան և խորածանկ: Վրիժառությունն ու զայրույթը հաճախ իներցիայի ուժով են գործում: Յեվ, իշարկե, կան մանր, հոգեազես վատառողջ մարդիկ, վորոնք մերձավորների տառապանքներից հաճույք ստանալու հիվանդագին ծարագ են զզում:

Մի անգամ նա, ժպտալով ցույց տվեց ինձ մի հեռագիր.

«Դարձյալ ձերբակալեցին, ասացեք, վոր արձակեն»:

Ստորագրված եր՝ իվան վոյլիյ:

— Յես կարգացի նրա գերքը, շատ հավանեցի: Ահա նրա մեջ յես իսկույն մի հինգ բառ զգում, նկատում եմ այն մորգուն, վորը հաս-

կանում ե սիալների անխուսափելիությունը և չի բարկանում, անձնական վիրավորանքից չի կատաղում: Իսկ նրան ձերբակալում են, կարծեմ, յերբորդ անգամ: Դուք նրան գուցե խորհուրդ տայիք հեռանալ դյուզից, թե չե՞ կարող են դեռ սպանել: Ինչպես յերկվում ե, նրան այնտեղ չեն սիրում: Խորհուրդ տվեք: Հեռագրով:

Հաճախ ինձ շատ եր զարմացնում լենինի պատրաստակամությունը՝ որնելու այն մարդկանց, վորոնց նա իր թշնամիներն եր համարում, և վոչ միայն պատրաստկամությունը, այլ նաև հոգացողությունը նրանց աղադայի մասին: Այսպես, որինակ՝ մեկ զեներալի, վոր գիտնական եր, քիմիկոս, մահվան պատիժ եր սպառնում:

— Հըմ, հըմ, — ասաց լենինը, ուշադրությամբ լսելով իմ պատմությունը: — Ձեր կարծիքով, նա չզիտե՞ր, վոր վորդիները զենքը թագցրել են լաբարատորիայում: Այսուղինչ-վոր ուսմանափակա կա: Սակայն — թող այս գործը Ձերժինսկին քննի, նա ճշմարտությունը յերեգան հանելու նուրբ հատկություն ունի:

Մի քանի որից հետո նա հեռախոսով խոսեց ինձ հետ — Պետրովովադ. —

— Իսկ ձեր գեներալին կարձակենք, կարծեմ, արդեն արձակել են: Նա ի՞նչ և ուզում անել:

— Հոմոեմոլյուսիա...

— Այո, այո՛, ինչ-վոր կաբրույան թըժ-

վուտ: Եհ՛, թող կարբոլյում յեփի: Դուք ա-
սացեք ինձ, թե նա ինչ է ուզում...

Յեվ վորպեսովի թագանի մարդու փրկու-
թյան ամռթալի ուրախությունը, լենինը ու-
րախությունը քողարկեց հեգնանքով:

Մի քանի որից հետո նա կրկին հարցրեց՝
— Իսկ ի՞նչ յեղավ գեներալը, աեղավոր-
վեց:

19 թվին պետերբուրգյան խոհանոցներն
եր գալիս մի շատ գեղեցիկ կին և խիստ տռնով
պահանջում՝

— Յես իշխանուհի Զ. Եմ, ինձ վոսկր ալ-
վե՛ք իմ շների համար:

Պատմուժ Ելին, վոր նա, չտանելով նվաս-
տացումն ու քաղցր, վճռել և խեղդվել նեկա-
յում, սակայն իրը թե, նրա չորս շները, զգա-
լով տիրուհու չար դիտավորությունը, վազել
են նրա յատեվից և իրենց վոռնոցով, հուզմուն-
քով ստիպել են նրան հրաժարվել ինքնասպա-
նությունից:

Յես պատմեցի լենինին այդ լեզենդան:
Խեթ-խեթ նայելով ինձ, վարից, վեր նա շա-
րունակ աչքերը կկոցելով, վերջապես բոլորո-
վին փակելով աչքերը, ասաց խոժոռած՝

— Յեթե այդ նույնիսկ սարքովի բան ե,
ապա փառ չե հորինված: Հեղափոխության կա-
տակներից ե:

Լոեց: Վեր կացավ ու հավաքելով սեղանի
վրայի թղթերը, ասաց մտազբաղ՝

«Այո՛, այդ մարդկանց գրությունը շատ
ծանրացավ, պատմությունը շատ գաժան մայ-
քիկ ե և վրեժինդրության գործում վոչ մի
բանի առաջ կանգ չի առնում: Ի՞նչ ասել կուզի-
այդ մարդիկ վատ վիճակում են. նրանցից խե-
լոքներն իհարկե հասկանում են, վոր արմա-
տով են հանված և այլևս հողի մեջ չեն աճե-
լու: Իսկ տրանսլանտացիան, Յեվրոպա տեղա-
փոխելը խելոքներին չի բավարարի: Կար-
մարդիկն, կապրե՞ն նրանք անտեղ, ի՞նչ եք
կարծում:

— Կարծում եմ, չեն հարժարվի:

— Նշանակում ե — կամ մեզ հետ կդան,
կամ թե չե՝ նորից միջոցներ ճեռք կառնեն ին-
տերվենցիայի համար:

Յես հարցրի. ինձ թվո՞ւմ ե այդ, թե իս-
կապես նա խղճում ե մարդկանց:

— Խելոքներին խղճում, ախտոսում եմ.
Խելոք մարդկանց թիվը շատ քիչ ե մեզանում:
Մենք առավելապես տաղանդավոր ժողովուրդ
ենք, սակայն ծույլ մտքի տեր:

Յեվ հիշելով մի քանի ընկերների, վորոնք
ազատազրվել են դաստկարգային զոռհոգեբա-
նությունից, աշխատում են «բայլշեվիկների
հետ», նա գարմանալի քնքությամբ սկսեց խո-
սել նրանց մասին:

Զարմանալի ուժեղ կամքի տեր մարդ լի-
նելով, լենինը վերին աստիճանի ոժոված եր
լավագույն հեղափոխական ինտիլիդենցիային

Հատուկ կողմերով — ինքնաստհմանափակում, վոր հաճախ հասնում եր ինքնախոշտանդման, ինքնասաղճատման, հասնում եր թախմետով՝ յան մեխերի, արվեստի ժխտման, հասնում եր և. Անդրեևի հերոսներից մեկի որամարանությանը — «Մարդիկ վատ են ապրում, որեմն, յես ել պետք ե վատ ապրեմ»:

Ծանր, սովի 19 թվին Լենինն ամաչում եր ուտել այն մթերքները, վոր ուղարկում ելին նրան ընկերները, զինվորները և գյուղացիները գավառից: Յերբ նրա անպահույց բնակարանը ծանրոցներ ելին ըերում, նա կնճռուում, նեղանում եր և շտապով ալյուրը, շաքարը, յուղը բաժանում եր հիվանդ կամ սննդի պակասությունից թուլացած ընկերներին: Հրավիրելով ինձ իր մոտ ճաշի, նա ասաց՝

— Ապիսած ձկով կհյուրասիրեմ, Սոտրախանից են ուղարկել: Յեզ, խոժուելով իր Սուրատով յակատը, խթելով մի կողմ՝ իր ամենատես աշքերը, ավելացրեց —

«Ուղարկում են, կարծես՝ աղա կա՞ այստեղ. ինչպես սրան վերջ տալ. հրաժարվես, չստանաս — կվիրավորես, իսկ չորս կողմդ բոլորը քաղցած են:

Զափավոր, ժուժկալ, զերծ գինի, ծխախոտ գործածելու սովորությունից, առավոտից մինչև յերեկո բարդ, ծանր աշխատանքով զբաղված, նա բոլորովին չեր կարողանում չուգալ իր մասին. բայց ուշադիր հետեւում եր ընկերների կյանքին: Նստած իր կարինետում

սեղանի առաջ, արագ գրում ե և խոսում, գրի չը չհեռացնելով թղթից:

— Բարեկ, ինչպես ե առողջությունու. յես իսկույն կվերջացնեմ: Այստեղ մի ընկեր կա, գալառում և, ձանձրանում, տիրում ե, ինչպես յերեկում ե, հոգնել է: Պետք ե ոգնել. տրամադրությունը քիչ բան չե՞:

Մի անգամ Մոսկվայում դալիս եմ նրա ժոտ, հարցնում ե. —

— Ճաշել եք:

— Այո՞:

— Չե՞ք հորինում:

— Վկաներ կան, — ճաշել եմ կրեմելի ճաշաբանում:

— Յես լսել եմ — վատ են պատրաստում. այնտեղ:

— Վատ չե, բայց կարող ելին ավելի լավ պատրաստել:

Նա իսկույն մանրամասն հարցրեց. ինչու յե վատ, ինչպես կարելի յե լավացնել:

Յեզ սկսեց բարկացած խոսել՝

— Ի՞նչ ե, չե՞ն կարող դրանք չնորհքով խոհարար վարձել: Մարդիկ աշխատում են բառացի կերպով մինչև ուշաթափություն, նրանց պետք ե համեղ ծաշ տալ, զորպեսզի նրանք շատ ուտեն: Յես զիտեմ, վոր մերդ քիչ կա և յեղածն ել վատ ե, — այստեղ վարպետ խոհարար ե պետք: Յեզ հիշեց ինչ-վոր գիգիենիստի քառերը համեմունքների դերի մասին սննդա-

ոռության և մարսողության պրոցեսում։ Յեւ
հարցը իւ։

— Այդ ինչպէ՞ս եք դուք այդպիսի բաների
մասին մտածելու ժամանակ գտնում։ Նա յել
հարցը եց՝

— Ռացիոնալ մննդի մասի՞ն։

Յեվ իր բառերի տոնով ինձ հասկացրեց,
վոր իմ հարցն անտեղի յեր։ Իմ Հին ծանոթ Գ.
Ա. Սկարախողովը, նույնպես Սորմովոյից,
մեղմ բնավորության տեր մի մարդ, դանդառ-
վում եր Զեկայում կատարած ծանր աշխա-
տանքից։ Յես ասացի նրան։

— Յեվ ինձ թվում ե, վոր այդ ձեր գործը
չէ, չի համապատասխանում ձեր բնավորու-
թյանը։

Նա տիսուր արտահայտությամբ համա-
ձայնվեց։

— Բոլորովին չի համապատասխանում
իմ բնավորությանը։

Բայց, մտածելուց հետո, ասաց։ —

— Սակայն, յերբ հիշում ես, վոր իլիչն ել
հավանորեն հաճախ իր ուժերից վեր ե աշխա-
տում, — ամաչում ես քո թուլության համար։

Յես ճանաչում եյի և ճանաչում եմ շատ-
րանվորներ, վորոնք նույնպես ստիպված եյին
և ստիպված են, ատամները պինդ սեղմած, ու-
ժասպառ լինել — բռնաբարել իրենց որդանա-
կան «առցիալական իդեալիզմը» հանուն այդ
գործի հաղթանակի, վորին նրանք ծառայում
են։

Արդյո՞ք, ևնինը, ինքն ել նեղվում ուժաւ-
պառ եր լինում չափազանց աշխատանքից։ Նա
չափազանց քիչ ուշադրություն եր գարձնում
էր վրա, վորպեսզի խոսեր ուրիշների հետ իր
մասին. նա, ավելի քան վորեվել մեկը, կարո-
ղանում եր լուել իր հոգին ալեկոծող գաղտնի
վորթորիկների մասին։ Սակայն մի անգամ Գոր-
կայում, վաղաքչելով ինչ-վոր յերեխաների,
նա ասաց.

— Ոչա, սրանք ավելի լավ կտպրեն, քան
մենք. մեր ապրած-տեսածներից չառ բան
նրանք չեն տեսնի և չեն զգա. նրանց կյանքն ա-
վելի պահաս դաժան կլինի։

Յեվ, նայելով հեռուն, ըլուրներին, վոր-
տեղ ամուր նստած եր գլուզը, նա ավելացրեց
մտաղբաղ։

— Բայց և այնպես յես չեմ նախանձում
նրանց։ Մեր սերնդին հաջողվեց կատարել մի
աշխատանք, վոր առջեցուցիչ և իր պատմա-
կան նշանակությամբ։ Պայմանների անխուսա-
կան հետեվանք՝ մեր կյանքի դաժանությունը
փելի հետեվանք՝ մեր կյանքի դաժանությունը
կհասկանան ու կարդարացնեն։ Ամեն ինչ կհաս-
կանան, ամեն ինչ։

Յերեխաներին նա փաղաքչում եր ինչ-վոր
առանձնապես քնքույշ և հոգաւար հպւմով։

Մի անգամ յեկա նրա մոտ և տեսնեմ՝ սե-
ղանի վրա դրված ե «Պատերազմ» և խաղաղու-
թյուն» վեպի մի հատորը։

— Այսուհետեւ Սալստուրի կարդալ վորսի տեսաբանը, բայց Հանկարծ հիշեցի, վորսնկերոջն ըան պետք է գրեմ։ Իսկ կարդալու համար ամենեվին ժամանակ չկա։ միայն այսոր գիշերը կարդացի ձեր զրքույիլը Տալստուրի մասին։

Փալտալով, աչքերը սեղմելով, նա հաճույքով մեկնվեց բազկաթոռի մեջ և ձայնը ցածրացնելով, արագ շարունակեց.

— Ի՞նչ Հակա յե, չե՞ : Ի՞նչ վիթխարի
մարդ է : Այս սու արդեն գեղարվեստադետ ե՞ ,
սիրելի ու . . . Յեզ, գիտեք, ինչն է զեռ զարմա-
նալին մինչև այս կոմսը , սրանից առաջ իսկա-
կան գեղջուկ չի լեղել գրականութան, քեզ :

Հետո, նայելով ինձ իր կկոցած աչքերով,
հարզըեց.

— Ո՞ւմ կարելի յէ Յեվրոպայում սրա

ինքն իրեն պատասխանեց.

Յանձնությամբ:

Յես հաճախ նկատել եմ նրա մեջ՝ ուս-
սովածն զեղարվեստով հպարտանալու դիմ։
Յերբեմն այդ դիմը ինձ թվում եր՝ տաքորի-
նակ ու խորթ Լենինին և նույնիսկ միամիտ,
սակայն հետո յես սովորեցի այդ գծի մեջ տես-
նել դեպի աշխատավոր ժողովուրդը տածած
նրա խորր-թագնված, ջերմ սիրո արձագան-
քը։

Կապրիում նա, դիտելով, թե ինչպես ձըկ-
նորսները բաց են անում շնաձուկի պատուծ
ու խճճած զանցերը, նկատեց. —

— Մերոնք ավելի ժիր ու արագ են աշխատում :

Յեկ յերբ յես իմ տարակուսանքը հայտնեցի այդ տոթիվ, նա մի փոքր բարկացած տապագ. —

—Հը՞մ, Հը՞մ, իսկ չե՞ք մոռանում դուք
մոռասատանը, ապրելով այս կղզում:

Վ. Ա. Դեսնիցիի — Ստրոկը հաղորդեց
ինձ, վոր մի անգամ նա Լենինի հետ յերկա-
թուղով գնալիս և յեղել Շվեդիայով և դիմե-
լիս և յեղել գերմանական մոնողրաֆիան Դյու-
բերի մասին:

Նույն կուպեյում նատած գերմանացիները հարցրել են նրանից, թե այդ ինչ գիրք է: Հետագայում պարզվել է, վոր նրանք վոչինչ չեն լսել իրենց մեծ նկարչի մասին: Այդ համարյա հրձվանք պատճառեց լենինին, և յերկու անգամ, հպարտությամբ, նա ասաց Դեսնից կուն:

— Նրանք յուրայիններին չեն ճանաչում,
իսկ մէնք ճանաչում ենք:

Մի անդամ Մոսկվայում Յե. Պ. Գեշո-
վայի բնակարանում յերեկոյան Լենինը լսե-
լով Բեթհովենի սոնատները՝ իսայ Դոբրո-
վելինի կատարմամբ, տաց և

— Յես «Apassionata»-ից այնուի լով զո-
չինչ չդիմեմ, պատրաստ եմ լսելու այն ամեն

օր: Զարմանալի, գերմարդկային յերաժշտ-
տություն: Յես միշտ հպարտությամբ, գու-
ցե և նախվ, մտածում եմ. ահա ի՞նչ հրաշքներ
կարող են դորձել մարդիկ:

Յեվ աչքերը կկոցելով, ժպտալով, նա
տխուր ավելացրեց.

— Սակայն հաճախ յերաժշտություն լսել
չեմ կարող, ազդում ե ջղերիս վրա, ուղում ես
սիրալիս հիմարություններ ասել և չոյել այն
մարդկանց գլուխը, վորոնք ասպրելով կեզտոտ
դժոխքում, կարող են այդպիսի գեղեցկու-
թյուն ստեղծել: Իսկ այսոր վոչ-վոքի գլուխ
չոյել չի կարելի, ձեռքդ կկծեն, և պետք է խը-
փել այդ գլուխներին, խփել անխնա, թեև
մենք, վորակես իդեալ, դեմ ենք ամեն մի բրո-
նության մարդկանց նկատմամբ: Հըմ-հըմ,-
դժոխայնորեն դժվար պաշտոն:

Ինքը համարյա հիվանդ, շատ հոգնած,
նա դրում եր ինձ 1921 թ. VIII 9-ին.

Ա. Մ.

Զեր նամակն ուղարկեցի Հ. Բ. Կամենե-
վին. յես այնպես եմ հոգնել, վոր վոչնչից-վո-
չինչ չեմ կարող: Իսկ դուք արյուն եք թքում
և դուք չեք գնում: Այդ հշմարիտ, և ան-
թույլատրելի յե և սխալ. Յեկրոպայում, լավ
սահատորիայում և կրծշկվեք և յերեք անդամ
ավելի դործ կանեք: Ճիշտ եմ տառամ: Իսկ մե-

զանում վոչ բժշկություն կա, վոչ դործ, մի-
այն հոգս, իզուր հոգս: Գնացեք, բժշկվե-
ցեք. մի՛ համառեք, ինդրում եմ ձեզ:

Զեր Լենին

Նա մի տարրուց ավելի մի զարմանալի
համառությամբ պնդում եր, վոր յես հեռա-
նամ Ծուսասանից, և ինձ զարմացնում եր, թե
ինչպե՞ս նա, ամբողջովին աշխատանքով կլան-
ված հիշում ե, վոր ինչ-վոր մեկը, ինչ-վոր մի
տեղ հիվանդ է, հանգստի կարեք և զգում.

Այլպիսի նամակներ, ինչպես վերը բեր-
ված ե, նա զանազան մարդկանց ե գրել, հա-
վանորեն տասնյակներով:

—

Յես արդեն ասացի նրա բացառիկ վերա-
բերմունքի մասին դեպի ընկերները, նրանց
նկատմամբ ցուցաբերած այն ուշադրության
մասին, վորը խորաթափանց կերպով նկա-
տում եր նույնիսկ նրանց կյանքի անախորժ
մանը, վորը յերեվույթները: Սակայն նրա այդ
զգացմունքի մեջ յես յերեք չեցի կարուղնում
նկատել այն շահամնդրական հոգատարու-
թյունը, վորը, յերեմն, հատուկ և խելոք
գործատիրոջը իր վերաբերմունքի մեջ դեպի
ազնիվ ու ձեռնհաս աշխատողները:

Վո՞չ, այդ միայն խսկական ընկերոջ ներմ,
հոգեկան վերաբերմունքն եր, հավասարի
կողմից դեպի հավասարները տածած սիրո
զգացմունքը: Յես գիտեմ, վոր վլագիմիր

Անինի և նույնիսկ նրա՝ կուռակցության ամենախոշոր մարդկանց՝ միջև չի կարելի հավասարության նշան դնել, սակայն նա այդ կարծես՝ չգիտեր, իսկ ամիելի ճիշտ, չեր ուզում իմանալ: Նա խիստ եր մարդկանց հետ, նրանց հետ վիճելիս անխնա հեղնում եր, յերեմն նույնիսկ կծու կերպով ժաղրում եր նրանց, — այդ բոլորն այլպես եր:

Սակայն քանի՞-քանի՞ անդամ նրա դատությունների մեջ այն մարդկանց մասին, վորոնց յերեկ նա խաչ եր հանում և «վոչնչացնում», յես միանդամայն պարզ նկատում եյթ անկեղծ զարմանքի արտահայտություններ այդ մարդկանց տաղանդի և բարոյական կայունության հանդեպ, նրանց համառ ու ծանր աշխատանքի հանդեպ 1918-ից մինչև 1921 թվականների դժոխային պայմաններում, աշխատանք, վոր նրանք կատարում եյթն բոլոր յերկրների ու կուռակցությունների լրտեսներով շրջապատված, դավագրությունների մեջ, վորոնք, ինչպես նեխած պալարներ, ուռչում, բարձրանում եյթն յերկրի՝ պատերազմից հյուծված մարմնի վրա: Աշխատում եյթն առանց հանգստանալու, ուսում եյթն քիչ և վատ, ապրում եյթն անընդհատ տագնապի մեջ: Սակայն, ինքը Լենինը, կարծես, չեր զգում այդ պայմանների ծանրությունը և կյանքի տաղնապները, կյանքի, վոր ցնցված եր մինչև իր ամենախորուչչի հիմքերը քաղաքացիական կովկի արյունոտ փոթորկից: Յեզ

միայն մեկ անդամ, Մ. Ֆ. Անդրեևայի հետ դրուցելիս, նրա բերանից, ինչպես կարելի յեր դատել բառերից, դուրս թռավ գանգատի պես մի բան

— Իսկ ի՞նչ անենք, սիրելի Մ. Ֆ. պետք եղայքարել. անհրաժեշտ ե: Ծա՞նը և մեր դրությունը. իշարկե՛: Դուք կարծում եք, թե իմ դրությունն ել ծանր չի՞ լինում, լինում ե— և այն ել ինչպե՞ս: Սակայն նայեք Զերժինսկուն, — ի՞նչի՞ նման ե դարձել նա: Ի՞նչ կարող ես անել. թող մեր դրությունը ծանր լինի, միայն թե հաղթահարե՞նք:

Անձամբ յես նրանից միայն մի դանդատ եմ լսել.

— Ակասո՞ս, վոր Մարտովը մեղ հետ չե, չա՞տ ափսօս. ինչ զարմանալի ընկեր ե, ի՞նչ մաքուր մարդ:

Հիշում եմ, թե ինչպես ուրախ և յերկար ծիծաղում եր նա, կարգալով ինչ-վոր տեղ Մարտովի խոսքերը՝

«Թուսաստանում միայն յերկու կոմունիստ կա. Լենինը և Կոլոնտայյոր»:

Իսկ, ծիծաղելով, նա հառաջանքով ասաց՝ ի՞նչ խելոքն ե, ա՞չ . . .

Առանձին հարդանքով ու զարմանքով ասց նա, կարինետից ձանապարհ գնելով մի «տնտեսավար» ընկերոջ՝

— Դուք վաղո՞ւց եք նրան ճանաչում. նա կարող եր ուզածդ յափսական յերկրի մի-

Նիստրների, կարինետների զլուխ կանգնած լինել:

Յեվ ձեռքերը շինոյ՝ ծիծաղով ավելացրեց.—

— Յեվոպան մեղնից աղքատ և տաղանդավոր մարդկանցով:

Յս նրան առաջարկեցի գնալ Ծովակալության վարչությունը և տեսնել մի բայլչելիկի—նախկին թնդանոթաձիգի հնարած ապառատը, վորով ստուգման և յենթարկվում ողանավերի վրա կատարվող հրաձգությունը:

— Իսկ յես ի՞նչ եմ հասկանում դրանից, չարցրեց նա, սակայն գնաց: Մի կիսամութ սենյակում, սեղանի շուրջը, վորի վրա զըրված եր ապարատը, հավաքվել եյին մոտ 7 հոգի մոայլ գեներալները բոլորը սպիտակած, բերավոր ծերունիներ, ուսումնական մարդեկ: Նրանց մեջ լենինի համեստ, վոչ-զինվորական դեմքը մի տեսակ կորավ, աննկատելի դարձավ: Գյուտարարն սկսեց բացատրել ապարատի կազմությունը: Լենինը յերկու-յերեք ըուպէ նրան լսելուց հետո, հավանական շարժումով ասաց.—

— Հըմ, հըմ, և սկսեց գյուտարարին Հարցեր տալ այնպես աղատ, կարծես թե քըն-նում եր նրան քաղաքականության հարցերից. — իսկ ինչպես եք դուք հաջողել մեխանիզմի միաժամանակ յերկու աշխատանք, վորը վորոշում և նշանոցի կետը. և չի՞ կարելի արդյոք հրանոթների առատամների հաստումը ավտո-

մատիկ կերպով կապել մեխանիզմի ցուցումների հետ:

Հարցը հարվածելիության դաշտի ծավալի և ուրիշ այլ բաների մասին,—գյուտարարը և գեներալները աշխուժով նրան բացատրում եյին, իսկ մյուս որը գյուտարարը պատմում եր ինձ. —

— Յես հաղորդեցի իմ գեներալներին, վորդուք կզաք ձեր ընկերոջ հետ, սակայն չասացի՝ թե ում հետ: Նրանք չնահաչեցին իլյիչին, և հավանաբար, չեյին ել կարող յերեվակայել, վոր նա կզա առանց աղմուկի, առանց շքի, առանց պահակի: Հարցնում են՝ դատելինի՞կ ե, պրոֆեսո՞ր: Լենին: Սարսափելի զարմացան—ինչպե՞ս. նման չե՞ր: Յեվ, վերջապես, վորտեղից նա գիտե մեր գերիմաստությունը. նա հարցերն այնպես եր զնում, ինչպես տեխնիկապես լավ տեղյակ մա՞րդ: Միստիֆիկացիա յե՞: Կարծեմ, այդպիս ել չհավատացին, վոր նրանց մոտ հենց լենինն ե յեղել:

Իսկ լենինը ծովակալությունից վերադառնալիս ճանապարհին հուզված ծիծաղում և ասում եր գյուտարարի մտսին—

— Այ, ինչպես կարելի յես սխալվել մարդկանց գնահատելիս: Յես գիտեյի, վոր դա չին աղնիվ ընկեր ե, բայց նրանցից մեկը, վորոնք հրաշքներ չեն գործում. իսկ նա հենց այդպի-կեցցե՞: Վո՞չ, գեներալներն, ասենք, լինի-կեցցե՞:

խեթ նայեցին իմ վրա, յերբ յես կառկած հայտնեցի ապարատի գործնական արժեքի նը կատամամբ: իսկ յես դիմամբ այդ արի, —ու զում ելի իմանալ, թէ իրո՞ք ինչպես են նրանք գնահատում այդ սրամիտ գործը:

Բարձր ծիծալելով, հետո հարցրեց. —

«Ասացեք, ի՞ն ուրիշ գյուղեր ել ունի՞»: Այդպես չի կարելի, նա պետք է ուրիշ վոչ մի բանով չզբաղվի. Ե՛ւ, յեթե մենք հնարավորություն ունենայինք այդ տեխնիկաների համար աշխատանքի իդեալական պայմաններ ստեղծե՞լ: Քսան և չինգ տարուց հետո, թուսաստանը աշխարհի առաջավոր յերկիրը կլինե՞ր:

Այո, հաճախ եմ լսել յես նրա գովասանքը՝ ները, ուղղված ընկերների հասցեյին: Յեվ նույնիսկ անձնական համակրանքը, լենինը կարողանում եր խոսել, ինչպես հարկն ե զնաւակը նրանց յեւանդը:

Յես շատ զարմացած եի, վոր նա այնպես բարձր եր գնահատում է. Դ. Տրոցկու կազմակերպչական ընդունակությունները: Վ. Իլյի նկատեց իմ այդ զարմանքը:

— Այո՛, յես գիտեմ, իմ և նրա հարաբերությունների մասին ինչ-վոր անձիցտ լուրեր են պտտում. սակայն, ինչ կա—կա, իսկ ինչ չկա—չկա, այդ յես ել գիտեմ: Մ. և նա կարողացավ կաղմակերպել ուղմական մասնագիտ-

Մի փոքր լուռթյունից հետո, նա ցածր ձայնով և տիուր ավելացրեց.

— Բայց ի այնպես, մերը չե՞ մեզ հետ է, բայց մեր մարդը չե: Փաստուր ե: Յեվ նրա մեջ կա ինչ-վոր... վատ բան կասալից...

Մյու բառերը՝ «մեզ չետ է, բայց մեր մարդը չը չե», յես յսել ելի նրանից յերկու անգամ, յերկրորդ անգամ այլ բառերն ասվեցին մի ուրիշ, նույնպես խոչըր մարդու մասին: Նա մերից, մենապես խոչըր մարդու մասին: Մարդ կանց վ. իլլիչից հետո, շատ չանցած: Մարդ կանց վ. իլլիչին զգում եր, ինչպես յերեվում է, շատ լավ: Մի անգամ, մանելով նրա կարինեցած լավությունը, յես այնուեղ տեսա մի մարդու, վորը յետը յիտ զնալով զեսի զուր, հրաժեշտ եր տալիս վ. իլլիչին, իսկ վ. իլլիչը ասանց նայելու նրա վրա, զրում եր:

— Ճահացում եք դրան, — հարցրեց նա, ցույց տալով մասով զուր: Յես տացի, վոր նա մի-յերկու անգամ դիմել ե ինձ «Համաշխարհային զբականություն» գործերով:

— Յեվ ի՞նչ:

— Կարող եմ ասել, վոր ամենաանվիրթ և բոի մարդն է:

— Հի՞մ, հի՞մ... Ստորաքարչի մեկն ե. և հավանութեն սրիկու: Թեհ յես նրան առաջին անդամն եմ անսում, զուցե սիսլվում եմ:

Վո՞չ, վ. իլլիչը չսխալվեց. մի քանի ամսից չետո այդ մարդը լիսովին արդարացրեց լենինի բնութաղիրը:

Մարդկանց մասին նա շատ եր մտածում,

անհանգստացած նրանով, վոր ինչպես նա յեր ասում՝

— Մեր ասլորատը խայտաբղետ է, Հոկտեմբերից հետո շատ խորժ մարդ և խցկվել նրա մեջ։ Այդ առաքինի և ձեր սիրած ինտելիդենցիայի մեղքով և կատարվում, — այդ նրա սառը սարոտաժի հետեւանքն է, այդ։

Այդ նա ասում եր, ինձ հետ Գորկայում զբանելիս։ Զեմ հիշում, թե ինչու յես խոսք բաց արի Ալեքսանդրու մասին, կարծեմ, նա այդ ժամանակ մի ինչ-վոր տղեղ բան արեց։

— Կարո՞ղ եք յերեվակայել. հենց առաջին հանդիպումից յես մի զուտ ֆիզիկական զգվանք զգացի դեպի նա։ Անհաղթելի։ Յերբեք, վո՞չ-վոք իմ մեջ այդպիսի զգացում առաջ չի բերել։ Առիթ ունեյի նրա հետ միասին աշխատելու, ամեն կերպ զսպում եյի ինձ, անհարմար եր, սակայն զուտմ եյի, վոր չե՛մ կարող տանել այդ վիժվածքին։

Յեվ զարմացած ուսերը շարժելով տոսաց։

— Իսկ, ահա, անզգամ Մալինովսկուն չկարողացա ճանաչել, շատ մոթ դորժ ե այդ, Մալինովսկիյ. . .

—
Նրա վերաբերմունքը դեպի ինձ խիստ ուսուցչի և բարի ՀՀողատար բարեկամից» վերաբերմունք եր։

— Առեղծվածային մարդ եք դուք, — ասաց նա ինձ կատակով, — դրականության մեջ կար-

ծես՝ լավ ուեալիստ եք, իսկ ձեր վերաբերմունքով դեպի մարդիկ — ոսմանտիկ։ Զեպանում բոլորը պատմության զոհե՞րն են։ Մենք գիտենք պատմությունը և մենք ասում ենք զոհարին — կործանեցեք զոհարանները, քանդեցեք տաճարները, կորչե՞ն աստվածները։ Իսկ դուք ուզում եք համարվել ինձ, վոր բանվոր դասակարգի մարտական կուսակցությունը պարտավոր ե ամենից առաջ հարժար վիճակ ստեղծել ինտելիդենտների համար։

Փուցե յես սիսարվում եմ, բայց ինձ թը վում եր, վոր ինձ հետ զրուցելը հաճելի յեր վ. իլլիչին։ Նա համարյա միշտ առաջարկում եր՝

— Յեթե դաք՝ զանգահարեք, կտեսնը վեհք։

Իսկ մի անգամ ասաց՝

— Զեղ հետ խոսելը միշտ հետաքրքրական է, ձեր տպավորությունները բազմազան են և լայն։

Հարց ու փորձ եր անում ինտելիդենցիայի արամագրության մասին, առանձնապես ուշադիր՝ գիտնականների մասին, — յես այդ ժամանակ աշխատում եյի Ա. Բ. Այլատովի հետ միասին «Գիտնականների կենցաղը բարելավող հանձնաժողովում»։ Հետաքրքրվեց պրոլետարական գրականությունը։

— Ի՞նչ եք սպասում դուք նրանից։

Յես ասացի, վոր շատ բան եմ սպասում, սակայն, անհրաժեշտ եմ համարում կազմա-

Դերակել գրականության բարձրակայն զպքոց՝
լեզվագիտության, ուսուր—Արհմատուրի և Ա-
րելիքի լեզուների, ժողովրդագիտության,
հազարամյակին գրականության և առանձին
ուսուական գրականության ամբիոններով։

— Հըմ, Հրմ, — ասում եր նու, աչքերը
կկոցելով և քրքջարով։ Լայն և և շլացուցի՛չ։
Վոր լայն և այդ ծրագիրը — յու զեմ չեմ, բայց
ահա շլացուցի՛չ կլինի, չե։ Մեր պրոֆեսոր-
ները մենք արգեն չունենք այդ ճյուղում, իսկ
բուրժուական պրոֆեսորներն ել այնպիսի՛
պատմություն ցույց կտան։ Վո՞չ, այժմ մենք
այդ հարցը չպետք է շարժենք. մի յերեք,
չինք տարի պիտք ե սպասել։

Յեվ գանգասպից՝

— Կարգարու ժամանակ բոլորովին չկա։

Հատկապես և մի քանի անգամ՝ բնդզել
և Գևմյան Բոդնու աշխատանքի ազնուցիսն
նշանակությունը, բայց ասում եր՝

— Մի քիչ դուքսիկ ե, բնթերցողի յետեվից
և դնում, մինչդեռ պիտք և մի քիչ առաջից
բնթանալ։

Մայտկովսկուն անվաստհությունը և
նույնիսկ ջղայնորեն եր վերարերցում։

— Ազմկում և, ինչ-քոր ծոռումուն բա-
սեր և հորիսում, և բոլորն ել նըս մաս այն չե,
իմ կործիքով, այն չե, և քիչ հատկանութի յի։
Յրգած և բոլորը, կորզայր զժգար ե։ Տաղան-
դակո՞ր ե։ Նոյնիսկ շա՞տ։ Հըմ, Հրմ, անո-
նենք։ Իսկ գուք չե՞ք գտնում, վոր զոտանո-

վորհեր շատ-շատ են զլում։ Յեվ ժուռնալի-
րում ամբողջ յերեսներով բանաստեղծու-
թյուններ կան, և համարյա ամեն որ ժողովա-
ծուներ են լույս տեսնում։

Յես անոցի, վոր յերիտասարգության հա-
կումը զեալի յերգը բնական և այսպիսի որե-
րում, և վոր—իմ կարծիքով—միջակ վոտա-
նավորներ գրերն ավելի հեշտ ե, քան լով ար-
ձակը, և քիչ ել ժամանակ են պահանջում վո-
տանավորները. բացի գրանից, մենք շատ լով-
ուսուցիչներ ունենք տաղաշափության տեխ-
նիկայի բնագավառում։

— Ե՞ս, վոր բանաստեղծությունն ավելի
հեշտ ե, քան արձակը, — յևս գրոն չե՞մ հավա-
տում։ Զեմ կարող յերկակայել. իմ, թեկուզ,
կաշին քերթեք—յերկու տող չեմ գրի, — ասոց
նա, խոժոսվելով։ Մասսայի մեջ պետք է շար-
ժել, տարածել ամբողջ հեղափոխական հին-
գականությունը, վորքան կա թե մեզանում
և թե Յեվրոպայում։

Նա ուսւ մարդ եր, վոր յերկար ժամանակ
ապրել եր Ռուսաստանից դուրս, ուշադրու-
թյամբ զիտել եր իր յերկիրը, և եսպից այն ա-
վելի կեզեցիկ ու վաս և յերեվում։ Նա ձիչտ եր
զնահատում նրա թագնված ուժը—ժողովրդի
բացանիկ տաղանդավորությունը դեսես
թույլ, շարթնացած ծանր ու անձուկ պատ-
մության կողմից, սոկայն, ամենուրեք, սո-
սական կյանքի խավար Փոնի վրա նկատվող

տաղանդավորությունը, վոր կայլում և վոսկե
աստղերով:

Վլադիմիր Լենինը, այս աշխարհի մեծ,
խական մարդը մեռավ: Այդ մահը շատ սաս-
տիկ հարվածեց այն մարդկանց սրտերը, ովքեր
ճանաչում եյին նրան, շատ սաստիկ:

Սակայն մահվան սե գիծը միայն ել ավելի
սուր կերպով ե ընդգծում ամբողջ աշխարհի
աչքում նրա նշանակությունը—համաշխարհո-
յին աշխատավոր ժողովրդի առաջնորդի նշա-
նակությունը:


Յեզ յեթե նրա հանդեպ յեղած ատելու-
թյան ամպը ել ավելի թանձր եր, —միենույն
ե, չկա մի ուժ, վոր կարողանա հանգցնել, խա-
վարեցնել այն ջահը, վոր Լենինը բարձրացրեց
խելագարված աշխարհի հեղձուցիչ խավարում:

Յեզ չի յեղել մի մարդ, վորը այնպես,
ինչպես, նո, իսկապես արժանացած լինի ոչ-
խարհում հավերժ հիշատակի:

Վլադիմիր Լենինը մեռավ: Նրա մտքի ու
կամքի ժառանդները կենդանի յեն: Կենդանի
յեն և աշխատում են այնպես հաջող, ինչպես
վոչ-վոք, յերբեք, վոչ մի տեղ աշխարհում
չի աշխատել:

Տ0 թ. հուլիս





327

320

ԳԻՒԲ 25 ԿՈՊ. (2^½, մ.)



М. ГОРЬКИЙ — В. И. ЛЕНИН

Госиздат ССР Армении
Эревань — 1981

2013



